

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Բ.

4 ՅՈՒՆԻՍ 1881



Կ. ՊՕԼԵՍ

1881

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
20 Մերձանը Բիշտի էֆենտի խանի ներքե. քի. 20

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄԻ

Ն Ի Ս Տ Բ.

4 ՅՈՒՆԻՍ 1881

ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր

ԱՏԵՆԱՊԵՏ. — Գրիստոսաուր էֆէնտի Ղազարոսեան (առժամեայ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Ա. Վ. ԻՃԱԿ	ԱՅԻՆԱԿԱՆ (Ա. Վ. ԻՃԱԿ)	ԳՈՒՄՈՒՄ, ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ	ԳՈՒՄՈՒՄ, ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ
1 Կարապետ Եպս. Սերոբեան Բ		24 Գրիգոր Պէրպէրեան Բ 2	47 Յ. Նիշմանեան Տօքթօր Բ	48
2 Սիմոն Եպս. Սէֆէրեան Բ		22 Կարապետ Աղարդմաճեան Բ 2	Իսկիւտար Ս. Կարապետ	49 Միհրան Պահճէգափուլն
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ		23 Համբարձում Մազպուլեան	50 Պօղոս Թորգոմեան Բ 2	51 Տրդատ Փափաղեան
4 Կարապետ Ք. Սէթեան		24 Մինաս Գափամաճեան	52	
	Բ. Վ. ԻՃԱԿ	25 Սարգիս Աղարէկեան Բ Պ	(Գ. Վ. ԻՃԱԿ)	
5 Մատթէոս Եպս. Իզմիրլեան		26 Սենեքերիմ Մանուկեան Բ 2	Գասըմ բաշա	
6 Պօղոս Վ. Խօլտամեան Բ Պ		27 Բարթող Քիւրքճիպաշեան	53 Գասպար Ձէրազ	
7 Գովհաննէս Ք. Մկրեան		28 Գէորգ Ապտուլահեան Բ 2	Բերա	
8 Գրիգոր » Աճէմեան		29 Յ. Մէրէմ-Գուլի	Բ	54 Աբիկ Ունճեան Բ
	Գ. Վ. ԻՃԱԿ	30		55 Գրիգոր Սէլիմէճեան Բ Պ
9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան		31		56 Գրիգոր Օտեան Բ Պ
10 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ Պ		32		57
11 Խորէն » Փէշիվան		33		58
12		34		59
	Դ. Վ. ԻՃԱԿ	35		60
19		36		61
44		37		62
45			(Բ. Վ. ԻՃԱԿ)	
46			Պէշիկբաշ	
	Ե. Վ. ԻՃԱԿ	38 Ալիքսան Խորասանճեան Բ 2	Միջագիւղ	65 Յակոբ Պ. Նորատունկ Բ
47 Խորէն Արքե. Նար Պէյ Բ 2		39 Բարսեղ Հալաճեան Բ		67 Տիգրան Եռուտիֆեան Բ Պ
48 Յովհաննէս Վ. Փափաղեան		40		65 Մկրտիչ Գազանճեան
49 Գարեգին » Թաթարեան			ԵԿԵՐԿԱՐՈՒ	66 Հրաժարեալ
20		41		67
		42 Մարուգէ Յրէնկեան Բ		Պէյգօզ Է. Ղալաբիա
		43 Պօղոս Եքսէրճեան		56 Միքայէլ Մամիկոնեան
		44		(Գ. Վ. ԻՃԱԿ)
			Իսկիւտար Ս. Խաչ	Քուզկուսնոյ Է. Իճատիէ
Բ Բացակայութիւն առաջին		45 Սիմոն Ֆէլէկեան		70
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ		46		70
Բ. Պ Բացկյ. բանաւոր պատճառաւ				

Գատըգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71		121 Ստեփան փափաղեան
72	Կարին	Տիվրիկ
73	Նարլըգաբու	122 Նշան Գարագոշ
		Զէյրուն Եւ Մարաշ
74	Եկեմիմահալլէ Սամաքիոյ	123
		Տրապիզոն
75	Թօփգափու	124
		Պաղտատ
75	Յովհաննէս Մարգարեան	125 Մելքօն Իսկէնտէրեան
	Էյուպ Ս. Եղիա Եւ Ս.	Տիգրանակերտ
	Աստուածածին	126 Միհրան Զօպանեան
76	103	Վան
		Աղբամար
77	Գուրուչեղմէ	127
		Աղբամար
77	Ասփա Իկիտպաշեան	128
	Հիսար Եւ Պոյաճի գիւղ	Հալեպ Եւ Այնթապ
78	106	129
		Սեբաստիա
79	Նոր գիւղ Եւ Սքեցիա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
		Ռուսճուգ
80	Պալատ	131
84	Տելեմաք Էքսէրճեան	Կարս
82	110	132 Արրահամ Յ. Սյվաղեան
		Զմյլկածագ
		133 Համբարձում Սարըբէշիշեան
		Գաղատիա
		134
		Ատանա
		135
		Սղերդ
		136 Մատթէոս Ալէքսանեան
		Եօզղատ
		137 Լօղօֆէթ Պալեօղեան
		Մալաքիա
		138 Գէորգ Վարդանեան
		Իզմիր
		139 Պապի Պապօեան
		Եգիպտոս
		140 Արրահամ Մուրատեան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. վաւերացումն տեղեկագրոց Երեսփոխանական նորոգ ընտրութեանց .
 Բ. Կազմութիւն Մայր Դիւանի .

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդ նախագահութեամբ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր և առժամեայ Ատենապետութեամբ Քրիստոստուր Էֆէնտի Ղազարոսեանի՝ Ատենաք բացուեցաւ ժամ 2 1/2ին , ի ներկայութեան 26 երեսփոխանաց , որոց թիւը 41 ի յանդեցաւ ի վերջէ :

Կան Դիւանիս վրայ , որոյ մէկ մասը վարչութեան կողմանէ գրեր են . Հարցում մը առ Կրօնական Խորհրդականն՝ ի մասին Սոյ Կաթողիկոսին մատուցած պատարագին . բողոքագիր մ'ընդդէմ Միջագիւղի ընտրութեան : Բայց այս թղթերը կը մնան այժմ , և մեք կանցնիմք ընտրութեանց տեղեկագիրները բըննելու :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտք է ամբողջ այդ գրերը կարդալ :

Ատենական թղթեր

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Նախ ընտրութիւնը պէտք է վաւերանան և ապա կարգացուին այդ թղթերը . ի՞նչ կը նշանակէ կարդալ այն թղթերը որոց վրայ չպիտի կրնամք վիճարանիլ :

ԶԱՅՆԵՐ. — Կարգացուին և ատենագրու-
թեան մէջ անցնին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Կարծեմ ներքին կանո-
նադիրը կը տրամադրէ որ նախ ընտրութեանց
տեղեկագրերը կարգացուին և ընտրութիւններն
վաւերանան , յետոյ միւս թղթերը :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Նախ ընտրու-
թեանց տեղեկագրերն և անոնց վերաբերեալ
թղթերն պէտք է կարգացուին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութեանէն եկած
գրերուն համար ի՞նչ կըսէք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ամեն թուղթ պէտք
է կարգացուի :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Այս
օրուան գործերնիս ընտրութեանց տեղեկա-
գրերը կարգալ և ընտրութիւններն վաւերաց-
նել է յետոյ եթէ ժամանակ ըլլայ՝ Մայր Դի-
ւանի ընտրութիւնը կատարել : Ահաւասիկ
մեր ներքին կանոնագրութեան 207 յօդ-
ուածը որ առժամեայ Դիւանին պարտականու-
թիւններն դժած է :

Յօդ. 2. « Բացման ճառէն անմիջապէս ետ-
քը՝ Նախագահ Արքազանը կը հրահրէ երես-
փոխանաց երկուսուններէն մէկը առժամեայ
ատենագրու թղթի , և կրտսերագոյն մը՝ ա-
տենագրութեան պաշտօն վարել :

Այս առժամեայ Դիւանին գործն է՝ վա-
ւերացում ընտրութեանց , և կազմութիւն Մայր
Դիւանին » :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ կարգացած-
նիդ նախընթաց նստին համար էր . վարչու-
թիւնը ընտրութեանց տեղեկագրերն անցած
նստին պարտաւոր էր բերել , բայց որովհետեւ

չը բերաւ , յանցաւոր է : Այժմ պէտք է կար-
գացուին այդ թղթերը , տեսնենք , եթէ ան-
միջական կարեւորութիւն ունին , ի նկատ
կաւանեմք : Այդ թղթերուն պարունակու-
թիւնը չեմք գիտեր , կարելի է Հայաս-
տանի մէջ աւերում մը կայ , պէտք է
կարգացուին , որպէս զի ինչ ըլլալին հասկը-
նամք և ըստ այնմ որոշում մ'ընենք :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Ես կառաջար-
կեմ որ Դիւանը տեղեկութիւն տայ ժողո-
վոյս թէ այդ թղթոց մէջ կարեւորութիւն ու-
նեցող բաներ կան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը դեռ չէ կար-
գացած այդ թղթերն . երբ մենք Դիւանին գը-
լուխն անցանք , այդ թղթերը սեղանին վրայ
էին :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Յանուն վար-
չութեան կը հարցնեմ թէ՛ ընտրութեանց տե-
ղեկագրերն անցած նստին չը բերելուն համար
Փափաղեան էֆէնտի ի՞նչպէս կարող է յան-
ցաւոր կոչել զՎարչութիւնը . եթէ այդ խօս-
քը թեթեւ կերպով կըսէ , պէտք է ետ առնէ ,
իսկ եթէ լուրջ կերպով կըսէ , կը նշանակէ թէ
կամրաստանէ զՎարչութիւնը : Գալով վար-
չութեան բերած թղթոց , անմիջական կարե-
ւորութիւն ունեցող բաներ չեն , կրնան յա-
ջորդ նստին մնալ . իսկ երեսփոխանական
ընտրութեանց տեղեկագրերն պէտք է ամենէն
առաջ կարգացուին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութիւնը պա-
կասաւոր է ժամանակին այդ տեղեկագրերը չը
բերելուն համար . ասի պարզապէս պարտա-
զանցութիւն մ'է . տարակոյս չկայ թէ երբ
վարչութիւնը ժամանակին իւր պարտականու-
թիւնը չը կատարեր , ըրածը զանցառութիւն
մը կը լինի :

2.

Հրաժարումն Երեսփոխանաց

Երեսփոխաններէն Մկրտիչ Էֆէնտի Քիւրբ-
ձիխանլեանի և Նշան Էֆէնտի Օտեանի հրա-
ժարականները կը կարգացուին :

Ամեն. Ս. Պատրիարք Հայր .

Ազգային Երեսփոխանական Ժողովոյ
չի պիտի կարենամ շարունակել , ուստի
կը խնդրեմ Ձեր Բարձր Սրբազնութեանէն
որ բարեհաճիք ընդունիլ հրաժարականս
և հաղորդել Ազգ. պատկառելի Ժողովոյ :

Մնամ

Բարձր Սրբազնութեան Չերում
Ամենախոնարհ ծառայ
Մկրտիչ Քիւրբձիխանլեան

1881 Յունիս 3 Իւսկիւտար

Ամենապատիւ Սրբազան Հայր

Նախագահ Ազգ. Ժողովոյ

Նկատելով որ անկարելի պիտի ըլ-
լայ ինձ օրինաւորապէս ներկայ գտնուիլ
Ազգային Ժողովոյ նիստերուն , պարտա-
ւորեալ եմ հրաժարիլ Ազգային երես-
փոխանութեանէ , ուստի կաղաչեմ որ Պատ-
կառելի Ժողովս բարեհաճի ընդունիլ
իմ հրաժարականս :

Մնամ Ամեն. Սրբազան Հօրդ-
Ամենախոնարհ ծառայ
Ն. Օտեան

Նիշան թաշ 6/18 Մայիս 1881

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Երեսփոխանա-
կան ընտրութեանց տեղեկագրերն անցած նիս-
տին չը բերելուն համար յանցաւոր չը կրնար
լինիլ վարչութիւնը , վասն զի երբ ընտրու-
թիւնք թաղերու մէջ այլ և այլ պատճառանօր
ետ կը մնան , վարչութիւնը ի՞նչպէս կրնայ
տեղեկագրել զանոնք : Առանց այս պատճառ-
ները բններու , Փափաղեան էֆէնտի իրաւունք
չունի զՎարչութիւնը ոճրագործ , եղեռնա-
գործ և չն. անուանելու :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Ընդմիջելով] Ես
յանցաւոր , պարտազանց բառերը գործածե-
ցի . ոճրագործ , եղեռնագործ ձեր բառերն
են :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — [Շարունակե-
լով] Անոր համար կըսեմ թէ , յանցաւորն ինքն
է որ առանց յետաձգման պատճառներն բնե-
լու , վճիռ կարձակէ . սակայն ես չեմ կարծեր
թէ Ժողովը մեր սիրելի Փափաղեան էֆէնտի
համամիտ գտնուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անտեղի է և չափա-
զանց՝ այս վիճարանութիւնը , և ալ չեմ կըլ-
նար ներել այս խնդրոյն վրայ խօսելու . ուստի
այսչափը բուռ համարելով այս միջադէպը կը
զոցեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եւ տակաւին երէկ
երեկոյ ցրուեցաւ ժողովոյս հրաւիրագրերն .
հարցուցէք երեսփոխանաց , ե՞րբ ընդունեցին
զայնս , այս յապաղումներն զանցառութիւն չե՞ն
միթէ : Այս ատենակ բաները Ժողովոյս գոյու-
թեանը կսպառնան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներեցէք , Փափաղ-
եան էֆէնտի , կը տեսնէք որ հոս եկած եմք
և գործի սխաժ , ուրեմն այս միջադէպը փակ-
ուած է , այլ ևս խօսք չկայ :

Ատենապետ էֆէնտի տեսնելով որ սոյն երկու հրոժարագրերուն վրայ դիտողութիւն ընող չկայ, զանոնք մի առ մի իրր պարզ հրոժարականներ րուէի կը դնէ՝ որ ժողովն միաձայնութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ անոնց հրոժարականն և Գիւանին կը յանձնարարէ որ Վարչութեան իմաց տայ որպէս զի նոյն հրոժարելոց տեղ նոր ընտրութիւն կատարել տայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեղեկագիրները կարգալէ յառաջ հարկ կը համարիմ Վարչութեան կողմանէ եկած սա հարցումը հաղորդել ժողովոյն՝ որ ընտրութեանց կը վերաբերի :

Ատենապետ էֆէնտին կը կարգայ հետեւեալը :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Երեսփոխանական ընտրութեանց պարագաներու մէջ Ազգ. Վարչութիւնն պաշտօն ունի ընտրեալ երեսփոխանաց սահմանադրական հանգամանքներն քննել, և ընտրական տեղեկագրերն Ազգ. Ժողովոյ բերած ատեն՝ ծանօթագրով մ'ապահովել անոնց ընտրելութեան պայմաններն ընտրական գործողութեանց օրինաւորութեան քննութիւնն Ազգ. Ժողովոյ վերապահելու պայմանաւ :

Սակայն խնդիր է թէ երբ ընտրեալ մ'օրինական այս կամ այն հանգամանքն չկրէ յանձին, Ազգ. Վարչութիւնն ունի ձեռնհասութիւն այդ ընտրութիւնը բեկանելու և նոր ընտրութիւն հրամայելու ընտրող թաղին կամ գաւառին, թէ ոչ պարտաւոր պիտի լինի ինք իւր քննութեան արդիւնքն և եթ ներկայել Ազգ. Ժողովոյ և անոր որոշման ենթարկել խնդիրն :

Այս կէտն լուսարանութեան կարօտ լինելով՝ Ազգ. Վարչական Խորհուրդն կը փութայ դայն պատկառելի ժողովոյդ ուշադրութեան մատուցանել և խնդրել որ շնորհ ընէ այս մասին բացայայտ որոշում մ'ընել և Ազգ. Վարչական Խորհրդոյ ձեռնհասութեան սահմանը ճշդել այս ընտրական գործոց մէջ :

Ի գիմաց Ազգ. Վարչ. Խորհրդոյ
Վ. Ատենապետի Վ. Ատենապետի
Ս. ԱԶՆԱԻՈՐ Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

3 Յունիս 1881

'Ի Պատր. Հայոց 'Ի Կ. Պօլիս

(Յետ ընթերցման)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութիւնը պէտք էր սերտած ըլլար Ազգ. Ժողովոյս եթէ ոչ բըսանամեայ՝ դէթ տասնամեայ ընթացքն : Երբ ընտրեալ մը սահմանադրական օրինաց մէկ հանգամանքէ զուրկ է, Վարչութիւնը երբէք չը կրնար բեկանել անոր ընտրութիւնը, այլ Ազգ. Ժողովոյս պիտի տեղեկագրէ իւր հետագոտութեանց արդիւնքը, և ընտրութիւններն բեկանելու կամ վաւերելու որոշումը Ազգ. Ժողովոյ կ'պատկանի :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Այս խնդիրը յուզելու ժամանակը չէ հիմայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմի կանցնիք ընտրութեան տեղեկագրոց :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



ՔՆՆՈՒՅԻՆ ԵՎ ՎԱՆԵՐԱԳՈՒՄԸ ԵՐԵՎՈՒՍԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒՔԵԱՆԳ

Ատենապետ էֆէնտի յայտարարելով թէ Երեսփոխանական ընտրութեանց տեղեկագրերը պիտի կարդացուն, կը հրաւիրէ Ատենապետ էֆէնտին որ զանոնք կարգայ : Հետեւաբար նախ վեց եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան մասին՝ Եկեղեցական Համագումար ժողովոյ տեղեկագիրը կը կարդայ :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր. Նախագահ Ազգային Ժողովոյ

Ըստ հրաւիրանաց Ամենապատիւ Բարձր Սրբազնութեան Ձերոյ՝ վեց Եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան համար կատարելի քուէարկութեան և քուէհամարի գործողութեան հսկելու ի պաշտօն կոչուած Յանձնաժողովս անցեալ ապրիլ երեսուն հինգ շաբթի օրը յԱզգային Պատրիարքարանին ներկայ գլտնուելով, և յորոշեալ ժամուն քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնը կատարուելով՝ արդիւնքը ցուցուց որ մայրաքաղաքիս մէջ գտնուող հարիւր ութսուն և երեք Եկեղեցական հայրերէն հարիւր երեսուն և մին մասնակցած է, և քուէից բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցաւ միայն Տ. Եղիշէ Վարդապետ Այվազեան քուէ 67՝ Գ. վիճակի համար :

Եւ որովհետեւ Եկեղեցական երեսփոխանաց թիւն ամբողջացնելու համար հինգ անձ կը պակսէր, առաւելագոյն

քուէ ստացողներէն հետեւեալ ցանկը պատրաստեց :

Գ. վիճակի համար Գուէ
Տ. Գրիգոր Ս. Եպիս. Տ. Պօղոսեան 35
Տ. Ոսկի Քահանայ Յօհաննեան 44

Գ. վիճակի համար
Տ. Արիստակէս Ս. Եպիս. Դերձակեան 33
Տ. Գէորգ Վարդապետ Բուսճուրլեան 45
Տ. Յովհաննէս » Արշարունի 47
Տ. Ներսէս » Արսլանեան 29
Տ. Յովհաննէս Քահ. Հիւնքեարպէ-
յէսեան 60
Տ. Արիստակէս Քահ. Մամբրէեան 33

Եւ Ե. վիճակի համար
Տ. Խաչատուր Քահ. Տ. Գարրիէյեան 42
Տ. Սուքիաս » Ստեփանոսեան 43

որպէս զի երկրորդ քուէարկութեամբ մնացեալ հինգ անդամք ընտրուին, և Ձեր Բարձր Սրբազնութեան հրաւիրանաց համաձայն այսօր՝ 6 մայիս չորեքշաբթի օր կրկին քուէարկութիւն ըլլալով և նախորդ քուէարկու Եկեղեցականաց թուոյն վրայ այս անգամ՝ երկու ևս աւելնալով հարիւր ութսուն և հինգ քուէնամակք ցրուած էին, որոյմէ հարիւր երեսուն և ութ հարք մասնակցեցան քուէարկութեան, և յորոշեալ ժամուն քուէհամարն ըլլալով՝ արդիւնքն եղաւ հետեւեալը :

Գ. վիճակի համար Գուէ
Տ. Գրիգոր Ս. Եպիս. Տ. Պօղոսեան 68

Գ. վիճակի համար
Տ. Գէորգ Վարդ. Բուսճուրլեան 83
Տ. Յովհաննէս Վարդ. Արշարունի 66
Տ. Յովհաննէս Քահ. Հիւնքեարպէ-
յէսեան 89

Եւ Ե. վիճակի համար
Տ. Սուքիաս Բահ. Ստեփաննոսեան 64

Հետեւապէս Ազգային ժողովոյ վեց
Եկեղեցական երեսփոխանաց ընտրու-
թիւնը կատարուելով՝ երեսփոխան ընտ-
րուեցան

Գ. վիճակի համար
Տ. Գրիգոր Ս. Եպիս. Տ. Պողոսեան

Դ. վիճակի համար
Տ. Գէորգ վարդապետ Բուսճուքեան
Տ. Եղիշէ » Այվազեան
Տ. Յովհաննէս » Արշարունի
Տ. Յովհաննէս Բ. Հիւնքեարպէյէնտեան

Եւ Ե. վիճակի համար
Տ. Սուքիաս Բահ. Ստեփաննոսեան

Արդ՝ Յանձնաժողովս իւր պաշտա-
ման աւարտեալ լինելը յայտնելով՝ իւր
սոյն տեղեկագիրը կը ներկայէ առ Ամե-
նապատիւ Սրբազնութեան Չեր :

Մնամք ամենախորին յարգանք
ի դիմաց Յանձնաժողովոյ
• Ատենադպիր Ատենապետ
ԽՈՐԷՆ ՌԱԸ. ՓԷԱԻՎԱՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍ. Տ. ՊՕՂՍԵԱՆ
6 Մայիս 1881
ի Պատր. Հայոց ի Կ. Պօլիս

Ահաւասիկ ընտրելոյ յանձնառագրերը.
Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր
Ընկալայ Չեր Բարձր Սրբազնութեան
Մայիս 6 թուականաւ նամակն որ Եկե-
ղեցական Համագումար ժողովոյ կողմէ
մեր երեսփոխան ընտրուիլն ծանուցանե-

լով կը հրաւիրէր զմեզ մեր հաճութիւնն
յայտնել սոյն ընտրութեան :

Եկեղեցական Ս. Հարց կողմէ մեր
անձին վրայ ցոյց տրուած համակրանաց
և վստահութեան սոյն քուէին առջև՝ որ
Ազգը ներկայացնող ժողովոյն մէջ աթու-
մը կուտայ մեզ, նահանջել կարելի չըլ-
լալով՝ կը հնազանդիմք իւր կամաց և կը
փութամք յայտնել թէ կը յօժարիմք ըն-
դունիլ սոյն պաշտօնն :

Մնամ Չեր Բարձր Սրբազնութեան
Խոնարհ ծառայ
Պատր. Փոխ.
Գեորգ Ծ. Վ. Բուսճուքեան
3 Յունիս 1881

Բարձրաշնորհ Սրբազան Հայր
Ազգանուէր Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Շնորհ ունիմ մեծապէս Պատուական
Սուրբ Հարց Եկեղեցականաց որ զիմ չա-
փաւորութիւն մեծարեցին ընտրելով ան-
դամ Ազգ. ժողովոյ ի տեղի չորրորդ վի-
ճակաւ դադարեալ Եկեղեցական երես-
փոխանաց, պարտաւորութիւն ծառայե-
լոյ իմօլսանն սիրայնոյ Ազգիս յորդորա-
միտ առնէ զիս, հաճութեամբ ընդունիլ
զհրաւէր Ամենապատիւ Սրբազնութեան
Չերոյ յայդ պաշտօն կարեւոր, յորում
առ արժանի լինիլ վստահութեան սուրբ
Հարց ընտրողաց խնոյ, կարօտիմ զօրացու-
ցիչ օրհնութեան և աղօթից Սրբազան
Հօրդ իմոյ երանելոյ :

Բարձրաշնորհ Սրբազնութեան Չերում
Բողոքանուէր և ամենախոնարհ ծառայ
11 Մայիս 1881 Եղիշէ Վ. Այվազեան

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր
և նախագահ Ազգ. Կեդր. վարչութեան

Թէպետե ինձ տրուած պաշտօնի բը-
նութիւնն իմ անձնական արժանիքէս
յոյժ գեր ի վերոյ կը նկատեմ, բայց և
այնպէս Եկեղեցական Ս. Հարց յիս ցոյց
տուած համակրանաց առաջ խուլ չմնա-
լու և նոցա վստահութեան դէմ չմե-
ղանչելու համար, սրտի մտօք յանձն
կառնում Ազգ. ժողովոյ անդամակցու-
թիւնը յոր զիս կը հրաւիրէ Ամենապա-
տիւ Սրբազնութիւն Չեր, որոյ վասն կան-
խաւ մատուցանելով իմ խորին յարգա-
նաց հաւաստին՝

Մնամ համբուրող Ս. աջոյդ
1881 Մայիս 6 Յովհաննէս Վ. Արշարունի

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Չեր Բարձր Սրբազնութիւնը Ազգա-
յին ժողովոյ երեսփոխան ընտրուած լի-
նելս ծանուցանելով կը հրաւիրէր զիս որ
սոյն պաշտօնին յանձնառութիւնս դրով
յայտնեմ :

Շնորհակալութիւն յայտնելով յայս
պաշտօն ընտրող Հարց և Տեարց կը վստ-
թամ խոստանալ որ պատրաստ եմ ծա-
ռայել սիրելի Ազգիս :

Մնամ
Բարձր Սրբազնութեան խորին
յարգանք ամենախոնարհ ծառայ
Տ. Յ. Հիւնքեարպէյէնտեան
2 Յունիս 1881

Ամենապատիւ Սրբազան Հայր
Սրբակրօն Եկեղեցական Հարց մեր
անձին ունեցած վստահութեան ըստ ա-

մենայնի հնազանդ, կամակոր յանձնա-
ռութիւնս խոնարհաբար յայտնելով :

Մնամ Ամենախոնարհ
Բարձր Սրբազնութեանդ
Սուքիաս Բահ. Ստեփաննոսեան
11 Մայիս 1881
Մայր Եկեղեցի

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Հարկ չէ կարգալ
յանձնառագրերն, վերջը ատենագրութեան
մէջ թող անցնին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լաւ, այնպէս կընենք,
Լսեցիր Եկեղեցական Համագումար ժողովոյ
տեղեկագիրը. Գր վիճակաւ դադարեալ 4 և
զանազան պատճառաւ պակաս 2 Եկեղեցա-
կան երեսփոխանաց տեղ 6 երեսփոխաններ
ընտրուած են, որք են՝

Տ. Գրիգոր Ս. Եպիսկոպոս Տ. Պողոսեան
Տ. Գէորգ վարդապետ Բուսճուքեան
Տ. Եղիշէ » Այվազեան
Տ. Յովհաննէս » Արշարունի
Տ. Յովհաննէս Բահ. Հիւնքեարպէյէնտեան
Տ. Սուքիաս » Ստեփաննոսեան

Կը տեսնէք թէ ասոնցմէ Նը իրենց յանձ-
նառագրերն զրկած են, իսկ մին՝ Տէր Գրիգոր
Եպիսկոպոս դեռ չէ զրկած. բայց Կրօնական
Խորհրդոյ Ատենադպիր Հայրը կապահովէ զմեզ
թէ խոստացած է երեսփոխանական պաշտօնն
ընդունիլ ուստի նորա յանձնառագրերն ալ ըն-
դունած կրնամք համարիլ :

Տեսնելով թէ դիտողութիւն ընող չկայ,
Ատենապետ էֆէնտի Եկեղեցական երեսփոխա-
նաց ընտրութեան տեղեկագիրն քուէի կը դնէ,
զոր ժողովն կը ՆԳՈՒՆԻ միաձայն :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին Երեսփոխան ՀՈՉԱԿԵՑ

- Տ. Գրիգոր Ս. Եսլիս. Տ. Պողոսեան
- Տ. Գէորգ Վարդապետ Բուսճուբլեան
- Տ. Եղիշէ » Այվազեան
- Տ. Յովհաննէս » Արշարունի
- Տ. Յովհաննէս Քաչ. Հինքեարպէյէնտեան
- Տ. Սուքիաս » Ստեփանոսեան

Ծանօթագիր Վարչութեան.

Ատենադպիր էֆէնտի կսկսի կարգաւ երեսփոխանական ընտրութեանց վրայօր Վարչութեան բերած ծանօթագիրը :

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Ազգային Վարչական Խորհուրդն ըստանալով Ազգային Ժողովոյ Մայր Դիւանին Ապրիլ 11 թուականաւ պաշտօնագիրն որ ժողովոյ նոր տարեշրջանին բացմանն առթիւ կը յանձնարարէր այլ և այլ պարագաներով պակսած երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարել տալ, փութաց թէ՛ մայրաքաղաքիս թաղերուն և թէ՛ առաջնորդական վիճակաց պէտք եղած հրահանգն յուղարկել և ստիպողական կերպով յանձնարարել որ երեսփոխանաց նորոգ ընտրութեանց ձեռնարկեն ըստ օրինի և արդիւնքն տեղեկագրեն :

Սոյն հրահանգին համաձայն թէ թաղերու և թէ գաւառաց մէջ ընտրութիւնք սկսած են կատարուիլ, և տեղեկագրերն հասնիլ հետզհետէ, որոցմէ յայտնուած է թէ՛

Ա. Բումէլի Հիսարի և Պոյաճի գիւղի միացեալ թաղից կողմէ երեսփոխան ընտրուած է,

1 Սենեքերիմ էֆէնտի Կիւլպէկեան

որ իւր յանձնառութիւնն յայտնած է գրով :

Բ. Էտիրնէի գաւառական Ընդհ. Ժողովոյ կողմէ երեսփոխան ընտրուած է,

2. Յակօբ էֆէնտի Պարոնեան

որ այս միջոցիս Պատրիարքարանի Դիւանատան մէջ պաշտօնի կոչուած է և չէ ուղած իւր յանձնառութիւնն յայտնել այժմէն, առարկելով թէ խնդրոյ նիւթ եղած է Պատրիարքարանի պաշտօնէից երեսփոխանական ընտրութիւնն, և թէ այս կէտն չլուծուած աւելորդ է իւր հաւանութիւնն յայնել :

Գ. Գարակէօմրիւկի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած են

- 3. Կարապետ էֆէնտի Փանոսեան
- 4. Յովհաննէս » Թորոսեան

որոց յանձնառութիւնն ապահովեալ է իրենց գրով :

Դ. Խասգիւղի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած են,

- 5. Սերովբէ էֆէնտի Ազնաւոր
- 6. Ռուբէն » Պուլկուրեան
- 7. Ռէթէոս » Թաղէոսեան

որք հաւանած են երեսփոխանական պաշտօնն ստանձնելու :

Ե. Էյուլպի երկուց թաղից կողմէ երեսփոխան ընտրուած է,

8. Եղիա էֆէնտի Շահպազ

որու յանձնառութեան գիրը թէև Ընտր, Ժողովն չէ յուղարկած հակառակ Պատրիարքարանի ազդարարութեան, սակայն ստուգուելով որ ընտրեալն Օսմ. հպատակ չէ և իբր այն չէ կարող երեսփոխան ընտրուիլ, հարկ եղած է առանց յանձնառագրի տեղեկագիրն ներկայել Ժողովոյդ ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն :

9. Գուղկունճուք և Իճատիէ միացեալ թաղից կողմէ երեսփոխան ընտրուած են,

- 9. Գրիգոր էֆէնտի Ներսեսեան
- 10. Մկրտիչ » Մէղպուրեան

որք իրենց հաճութիւնը յայտնած են գրով :

Ե. Պէշիկթաշի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած է,

11. Յովհաննէս էֆէնտի Քէրէստէճեան որ իւր յանձնառութիւնն յայտնած է:

Ը. Բէրայի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած են,

- 12. Տօք. Վիշէն էֆ. Օրմանեան
- 13. Ղազար » Հովուեան
- 14. Նշան » Պոյաճեան
- 15. Յարութիւն » Նորատունկեան
- 16. Տելեմար » Էքսէրճեան
- 17. Յարութիւն » Պէկեան

որ հաւանած են երեսփոխանական պաշտօնն ստանձնելու :

Թ. Կարնոյ Գաւառական Ընդհ. նուր Ժողովոյ կողմէ երեսփոխան ընտրուած է,

18. Սերովբէ էֆէնտի Ազնաւոր

որ ինչպէս նշանակուած է ի վերև, արդէն Խասգիւղի թաղի կողմէն երեսփոխան ընտրուած լինելով՝ ընդունած է թէև նոյն ընտրութիւնն, սակայն Սրբազան Պատրիարք Հօր առաջարկին վրայ հաւանած է Խասգիւղի ընտրութիւնը թողլով՝ Կարնոյ քուէն ընդունիլ, այն նըկատմամբ որ Պոլսոյ թաղ մ'աւելի կարճ միջոցի մէջ կրնայ ընտրել ուրիշ մը քան թէ գաւառական վիճակ մը :

Ժ. Միջագիւղի թաղին կողմէն երեսփոխան ընտրուած է,

19. Մկրտիչ էֆէնտի Ճանմեան

որ զրկած է իւր յանձնառագիրն :

ԺԱ. Եէնի քաբուի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած է,

20. Լևոն էֆէնտի Գափամաճեան

որ ընդունած է երեսփոխանական պաշտօնը :

ԺԲ. Թօք. քաբուի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած է,

21. Տօքթէօր Կոպեւնիկ էֆէնտի Հիւնքեարպէյէնտեան,

որ իւր յօժարութիւնը յայտնած է գրով :

ԺԳ. Մայր Եկեղեցւոյ, Կէտիկ փաշայի և Գումբարուի դրսի միացեալ թաղերն պակասած ութն երեսփոխանաց տեղ նոր ընտրութեան ձեռնարկելով՝ առաջին անգամ երեսփոխան կընտրուին Պօղոս Էֆէնտի ժամակոչեան, Միհրան Էֆէնտի Սէթեան, Աւետիս Էֆէնտի Սուրէնեան, սակայն ասոնցմէ առաջին երկուքն հրաժարելով և Սուրէնեան Էֆէնտին միայն ընդունելով՝ երկրորդ անգամ եօթն երեսփոխանաց ընտրութեան կը ձեռնարկուի, և կընտրուին Թովմաս Էֆէնտի Եսաեան, Սերովբէ Էֆէնտի Աղնաւորեան, Թորոս Էֆէնտի Սարաճեան, Յարութիւն Էֆէնտի Թիրեաքեան, Տիգրան Էֆէնտի Հիւնքեարպէյէնեան, Յարութիւն Պէյ Տատեան և Կարապետ Էֆէնտի Փանոսեան որոցմէ Տօքթօր Թիրեաքեան և Տիգրան Հիւնքեարպէյէնեան Էֆէնտիները կընդունին, իսկ Աղնաւորեան Սերովբէ Էֆէնտի Խասպիւզէն և Փանոսեան Կարապետ Էֆէնտի Քարակէօմլիկէն ընտրուած և նոյն թաղերու ընտրութիւնը ընդունած լինելով՝ կը հրաժարին, ինչպէս կը հրաժարին նաև Տատեան Յարութիւն պէյ, Եսայեան Թովմաս և Սարաճեան Թորոս Էֆէնտիներն:

- Հետևապէս երեսփոխան կը մնան
- 22. Աւետիս Էֆէնտի Սուրէնեան
 - 23. Տօք. Յարութիւն » Թիրեաքեան
 - 24. Տիգրան Էֆ. Հիւնքեարպէյէնեան

որք իրենց յանձնառութեան գիրն կուղարկեն, իսկ մնացեալ երեսփոխանաց տեղ՝ նոր ընտրութեան ձեռնարկելու համար ընտրող ժողովը լուադոյն կը համարի սպասել՝ ցաւարտ վաւերացման

ընտրութեանց, թէև ըստ ընտրական հրահանգի պէտք էր որ անմիջապէս հրաժարելոց տեղ նոր ընտրութեան ձեռնարկէր, և վարչական խորհուրդն նոյն հրահանգին գործադրութիւնը պիտի յանձնարարէ ընտրող ժողովոյ:

ԺԴ. Իսկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցւոյ թաղին կողմէ երեսփոխան ընտրուած է,

25. Յակոբ Էֆէնտի Հաճեան որու յանձնառութեան գիրն կցեալ է ընտրական տեղեկագրին:

ԺԵ. Պալատու թաղին կողմէ երեսփոխան ընտրուած են,

- 26. Տիգրան Էֆէնտի Բարաղամեան
- 27. Մկրտիչ » Կիւմլիչեան
- 28. Սահակ » Ղաղարոսեան

որոց յանձնառութիւնն ապահովեալ է:

ԺԶ. Գատը գիւղի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած են,

- 29. Գառնիկ Էֆէնտի Յովակիմեան
- 30. Կարապետ » Հաղարեան

որ յանձն առած են ընդունել երեսփոխանական պաշտօնն:

Ազգային վարչական խորհուրդն յիշեալ նորընտիր երեսփոխանաց, իբաց առեալ էյուպի միացեալ թաղից կողմէ ընտրեալ երեսփոխանն, որ Օսմանեան հպատակ չէ, ընտրելութեան հանգամանքները քննելով՝ ըստ ամենայնի Աղ-

գային Սահմանադրութեան համաձայն կը գանձէ, և կը փութայ ներկայ ծանօթագրով ընտրութեանց տեղեկագրերն ընտրելոց յանձնառութեան գրերուն հետ կցորդուած ներկայել Պատկառելի Ժողովոյդ ի քննութիւն և ի վաւերացումն:

Ի դիմաց Ազգային վարչական խորհրդոյ
 Վ. Ատենադպրի Վ. Ատենապետի
 Ս. ԱԶՆԱԻՈՐ Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
 3 Յունիս 1881
 Ի Պատրիարքարանի Հայոց Կոստանդնուպօլիս

Տեղեկագիր Պոյաճի գիւղի Ե. Բ. Հիսարի

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,

Այսօր ժամը 9 ին Պոյաճի գիւղի և Բ. Հիսարու ընտրողական ժողովս գումարուելով երեսփոխանի մը ընտրութեան քուէհամարը կատարեց. Պոյաճի գիւղէն 31 և Բ. Հիսարէ 34 քուէ եկաւ և ընդ ամենը 65 քուէ է:

Սենեքերիմ Էֆէնտի Կիւլպէկեան	40
Վարդան » Պապիկեան	11
Յովսէփ » Գալաֆեան	10
Յովհաննէս » Պոյաճեան	4

Ընդամենը ճիշդ 65

Եւ որովհետև Սենեքերիմ Էֆէնտի Կիւլպէկեան 40 քուէով բացարձակ առաւելութիւն ունեցաւ ուստի երկու թաղէս խնդրուած մի երեսփոխանն ինքըն եղաւ:

Ներկայ սոյն քուէհամարին
 Բ. Հիսարէ Աբրահամ Էֆ. Նուրումեան
 Յակոբ » Յովհաննէսեան
 Յարութիւն » Խանճեան

Պ. գիւղէ Աբիսողոմ » Անդրանիկեան
Յովհաննէս » Ուրախեան
Ռուբէն » Պիպերճեան
Աւետիս » Իտարէճեան

Նախագահ	Նախագահ
Ընտր. ժողովոյ	Ընտր. ժողովոյ
Բումէլի Հիսարու	Պոյաճի գիւղի
Տր. Սահակ Քան.	Տ. Պօղոս Բ. Կարազեան

3 մայիս 1881 Բ. Հիսար

[Յանձնառագիր ընտրելոյն]

Արժանապատիւ Տէր Հայր

Ընդունեցի Ձեր այս օրուան նամակը, որով կը ծանուցանէք թէ Հիսարու և Պոյաճի գիւղի միացեալ թաղից կողմանէ Ազգային Ընդհանուր ժողովոյ երեսփոխան ընտրուած եմ:

Սոյն թաղից հետ յարաբերութիւն չունենալով հանդերձ ինձ եղած պատւոյն որչափ որ անարժան եմ, բայց քանի որ ընտրողաց կողմանէ արժան դատուած է, շնորհակալութեամբս հանդերձ իմ ընդունելութիւնս կը յայտարարեմ:

Ընդունեցէք, Տէր Հայր, իմ շնորհակալութեանս հաւաստիքը:

Սեներեքիմ Թ. Կիւլպէկեան

Կ. Պոլիս 18 Մայիս 1881

[Յետ ընթերցման]

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ըստ որում տեղեկագրերն շատ են և զանոնք մի առ մի կարգաւ երկար կը լինի, կը համարձակիմ ա-

առջարկել որ՝ քանի որ Դիւանը անոնց մէջ թերութիւն մը չէ գտած՝ առանց կարգաւու վաւերացնենք ընտրութիւնները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ չը կրնար ըլլալ, զի նախ՝ Դիւանս կարգացած չէ գտնոնք, երկրորդ՝ Ժողովս որոշած է որ ընտրութեանց տեղեկագրերն կարգացուին : Եթէ ասիկայ խնդիր ընենք, կարգալէն աւելի ժամանակ պիտի կորսնցնենք, ուստի աւելի լաւ է որ կարգալը շարունակուի :

Հետևապէս Ատենապետ էֆէնտին Երեսփոխան ՀՌՁԱԿԵՑ

Սենեքերիմ էֆէնտի Ախլալէնկեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նորընտիր երեսփոխաններէն ունկնդրաց մէջ մարդ կայ, կը խընդրեմ Սրբազան Նախագահէն որ հրաւիրէ զանոնք բազմիւ խրեանց աթոռին վրայ :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Է. ԷՖ. — Դադարեալ երեսփոխան մը հաս նստած ատեն, անոր տեղ ընտրուածը հրաւիրել ընչ մը տրամաբանական չեմ գտներ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ ներքին կանոնադիրը ամենուս հաւանութեամբը ընդունուած է, պէտք է ներկայ եղողներն հրաւրեմք : Մագալուեան էֆէնտի, եթէ կուզէ, կրնայ առանձին առաջարկութիւն մ'ընել այս մասին : Իսկ այժմ երբ նոր երեսփոխան մը գայ, հինը կրնայ երթալ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մագալուեան էֆէնտի դիտողութիւնը շատ օրինաւոր է, բայց այսօր օրը չէ, ուստի պէտք է որ գրաւոր ընէ իւր առաջարկութիւնը :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Մ. ԷՖ. — Աղէկ մտածեցէք, այժմ Ժողովոյս մէջ դադարեալ երեսփոխան կայ. եթէ անոր տեղ ընտրուածն ալ գայ, մէկ թողէն երկու երեսփոխան պիտի ըլլան, և ի՞նչպէս կրնայ ըլլալ ասիկայ, երկուքն ալ մի և նոյն աթոռին վրայ պիտի նըստին :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Մեր ներքին կանոնադրութիւնը կը արամադրէ որ մինչև նորը չընտրուի դադարեալ երեսփոխանը կը շարունակէ իւր պաշտօնը. այս սկզբան չամբմատ Ս. Պատրիարքը կը շարունակէ հրաւիրագիր զրկել դադարեալ երեսփոխանաց, որով անոնք ալ կուգան իրենց աթոռը կրազմին. իսկ երբ հոս նոր ընտրութիւններն վաւերանան և նոր ընտրեալները գտն իրենց աթոռը բազմելու, անշուշտ դադարեալ երեսփոխաններն իրենց աթոռը նորեկներուն թողլով՝ կը մեկնին Ժողովէս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս խնդրոյն վրայ ալ խօսք չեմ կրնար տալ : Դուրսը նորընտիր եկեղեցական երեսփոխաններ կան, կը խնդրեմ Սրբազան Նախագահէն որ հրաւիրէ զանոնք :

Հետևաբար նորընտիր երեսփոխաններէն Արթ. Գէորգ Վարդապետ Բուսճօրլեան և Եղիշէ վարդապետ Այվազեան՝ Ս. Պատրիարք Հօր հրաւիրանօք եկան բազմեցուն ի շարս եկեղեցական Երեսփոխանաց :

Այն ինչ Ատենադպիր էֆէնտին միւս տեղեկագրոց ընթերցումը շարունակելու վրայ էր, երբ Նախագահ Սրբազան խօսք կատնու :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ընտրութեանց համար Վարչութիւնն ծանօթագիր մը բերաւ. թողերէն ալ տեղեկագրեր եկած են, կամ ծանօթագիրը կարգաւ աւելորդ է և կամ տե...

ղեկագրերը. բայց քանի որ ծանօթագիրը կարգացուցաւ, միւսները կարծեմ հարկ չէ կարդալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրէնքն այսպէս կը տրամադրէ, ևս օրինաց գործադրիչն եմ, ուստի ներեցէք որ շարունակենք :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Թէ որ օրինաւոր խօսքերու կարեւորութիւն չը տրուի, այն ժամանակ երեսփոխանք օրինաւոր խօսք ընելէ կղզուչանան : Վարչութիւնը ընտրութեանց վրայօք ծանօթագիր մը բերեր է, պէտք է կամ այն կարգաւ և կամ տեղեկագրերը. հետեւաբար երկուքն մէկը աւելորդ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանիս պաշտօնը առժամանակեայ է. ինչ որ օրէնքը կը տրամադրէ՝ զայն միայն կրնամ կատարել :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուղեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներեցէք միջոնկեալ խնդիրներու համար խօսք չեմ կրնար տալ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Օրինական դիտողութիւն ունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք չեմ կրնար տալ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը բողոքեմ. ի՞նչ իրաւամբ խօսք չէք տար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բողոքեցէք, և ձեր բողոքը կարծանագրուի. բայց տեսէք ինչ կըսէ օրէնքը :

Ատենադպիր էֆէնտին կանոնադրութեան Յօդուածին հետեւեալ վերջին պարբերութիւնները կը կարգայ :

« Ընտրութեանց տեղեկագրիւնները՝ որ Նախագահ Սրբազանին ուղղեալ են ընտրող ժողովներէն, ապահովութեան ծանօթագրով մը Իւր Սրբազանութեան կողմէն դիւանին կ'աւանդվին :

Ատենադպիրը կ'ընթեւնու 'զանոնք, և դիտողութիւններ՝ եթէ կան՝ կ'ըլլան. Ժողովը կ'արտասանէ իր վճիռը ընտրութեանց օրինաւորութեանը վրայ, և Ատենապետը երեսփոխան կը հռչակէ այն անունները որոց իշխանութիւնը վաւերական դատված է :

Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ անմիջապէս նորընտիր երեսփոխանները՝ եթէ ունկընդրաց մէջ են, գալ տեղ առնուլ և բազմիւ : Եթէ չ'են, յատուկ նամակաւ կը ծանուցնէ իրենց ընտրութեան վաւերացումը և կը հրաւիրէ 'զանոնք յաջորդ նիստին Ժողովին ալ յատուցեանց մասնակցիլ :

ԻԶՄԻՅԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Խնդիրը մութը մնաց. Սրբազան Պատրիարք Հայրը կըսէ թէ կամ վարչութեան ծանօթագիրն աւելորդ է և կամ այս տեղեկագրերն աւելորդ են. բայց այնպէս չէ. վարչութեան ծանօթագիրը ընտրելոց հանգամանաց, օրինակի համար, նոյս տարեաց, Օսմանեան հպատակ լինելուն, և այլնի, համար է. բայց Ընտրող. Ժողովոց տեղեկագրերն ընտրական գործողութեանց օրինաւորութեանը կը վերաբերին. ուստի Ժողովս պարտի քննել տեղեկագրերն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Երկու երեսփոխան կարծիք յայտնեցին, երկուքն ալ իրարու հակառակ : Փափագեան էֆէնտի կըսէ թէ երբ ընտրեալին տարիքը պակաս լինի, խնդիրը ժողովոյս ատենը պիտի ելնէ, իսկ դուք կըսէք թէ վարչութիւնը պիտի քննէ տարիքի խնդիրը :

ԻԶՄԻՅԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Վարչութիւնը պիտի քննէ միայն ընտրելոյն տարիքը և նորա Օսմանեան հպատակ լինելը կամ ո՛չ և

առանց իր կողմանէ սրտում տալու , իւր բըն- նութեանց արդիւնքը պիտի բերէ ժողովոյս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Մեր ներքին կանոնադրութեան 3րդ յօդուածը այդ պարագայն ալ ճշգրտ է . ուստի այս անգամ զայն ամբողջապէս պիտի կարգամ :

Յօդ. 3րդ — Ժողովը չը վաւերացնէր 'զայն ընտրութիւնը որ ընտրեալին յանձնառութիւնն տարազօղ ծանօթագիր չ'ունի ընտրող ժողովին կողմէն , և ընտրելութեան պայմաններն ա- ստիճանով ծանօթագիր ' Պատրիարք Սրբազանին կողմէն :

Ընտրութեանց տեղեկագիրները ' որ Նա- խագահ Սրբազանին ուղղեալ են ընտրող ժո- ղովներէն , ստիճանով ծանօթագրով մը իւր Սրբազնութեան կողմէն դաւանին կ'ա- լանդվին :

Ատենագրութիւններ ' զանոնք , և զխոսողութիւններ ' եթէ կան ' կ'ըլլան . ժողովը կ'արտասանէ իր վճիռը ընտրութեանց օրինա- լորութեանը վրայ , և Ատենագրութեան երեսփո- խան կը հրահանէ այն անունները որոց իշխա- նութիւնը վաւերական դատված է :

Նախագահ Սրբազանը կը հրահանէ անմի- ջապէս նորընտիր երեսփոխանները ' եթէ ուն- կնդրաց մէջ են , դալ տեղ տանու և բարձր : Եթէ չ'են , յատուկ նամակաւ կը ծանուցնէ ի- բնոց ընտրութեան վաւերացումը և կը հրահա- յէ 'զանոնք յաջորդ նիստին ժողովին աշխա- տութեանց մասնակցիլ :

Օրինաւորութեան թերութիւնն ունեցող տեղեկագիրը Նախաձեռնութեան գլխանին կը յղվի , և վաւերացումն ուրիշ նիստի կը մնայ :

Անմիջապէս կը ձեռնարկվի Մ. Գիւանին կազմութեանը , եթէ ժամանակը ներէ և ժո- ղովն ուղէ . եթէ ոչ ' ութ օրէն վերստին կը դումարվի նիստը ի ներկայութեան նորընտիր անդամոց . օրակարգ ունելով ' 1. Կազմութիւն Մ. Գիւանին , 2. Կազմութիւն Նախաբնից գլխանաց :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ահա իմ ը- սածս ալ այդ է . նորընտիր երեսփոխանաց ընտրելութեան պայմաններն սպաշտօղ ծա- նօթագիր մը կը բերէ վարչութիւնը , ինչպէս որ բերած է :

Ատենագրութեան Էֆէնտի սոյն միջադէպը փա- կելով ' Ատենագրութեան ընտրութեանց տեղեկագրերուն ընթերցումը կը շարունակէ :

Տեղեկագիր Անդրիանուպօլսոյ գաւառին

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Գաւառիս կողմէն ընտրեալ երես- փոխան Մեծապատիւ Վիչէն Էֆէնտի Ապ- տուլլահ հրաժարած ըլլալով , անոր տեղ ուրիշն ընտրելու համար Ամեն. Սրբաղ- նութեանդ կողմէն ուղղեալ 157 համար և նախընթաց ամսոյ 25 թուագրեալ հը- րամանագրին համաձայն անմիջապէս գա- լառական ժողով գումարելով , Ազգ. Սահ- մանագրութեան գծած պայմաններուն համեմատ նոր երեսփոխանի ընտրութիւ- նը կատարուած է , որոյ արդիւնքը կը փութամք ներկայիւս տեղեկագրել Ամեն Սրբաղնութեան Ձեր :

Գաւառական Ընդհ. ժողովս երեք եկեղեցական և տաս և ութը աշխարհա- կան անձերէ կը բաղկանայ , որոց (աշ- խարհականաց երեքը Ֆիլիպպէ և Փա- զարճըլսի թեմէն դեռ տակաւին չը ներ- կայացուած , և չորսն ալ առևտրական զբաղմամբ քաղաքէս տարակայ գտնուած ըլլալով , ներկայ տասն և չորս անդամօք կատարուեցաւ երեսփոխանի ընտրու- թեան գործողութիւնը երեք ընտրելեաց

վրայ գաղտնի քուէարկութեամբ , և քը- ւէից բացարձակ առաւելութեամբ , այս- ինքն , երեք քուէի դէմ տասն և մէկ քուէ ստանալով , Ազգ. կեդրոնական Ընդհանուր ժողովոյ երեսփոխան ընտ- րուեցաւ քաղաքիս բնիկներէն ի մայրա- քաղաքդ բնակող Մեծապատիւ Յակոբ Էֆէնտի Պարոնեանն :

Արդ , Ամեն. Հայր , յիշեալ նորըն- տիր երեսփոխանն ներկայացնելով Ձեր Բարձր Սրբաղնութեան խոնարհաբար խնդրեմք որ բարեհաճիք յանձնարարել ուժ որ անկ է ի պարտուպատշաճ տնօրի- նութիւնն :

Որով մնամք Ձեր Բարձր Սրբաղ- նութեան

Ամենախոնարհ ծառայ Վսն. Առաջ. Տեղ. և Նախագահ Ազգ. Գաւ. ժողովոյ

Մկրտիչ Աւագ. Քան. Պասմաձետն

Ատենագրութիւն Բ. Ատենագրութիւն 3. Խօշիեան 3. Յ. Սանտալձեան

4 Մայիս 1881

յ'Առաջ. Հայոց Ա. Պօլիս

Գերապատիւ Պատրիարքական Փոխանորդ Հայր

Ընկալայ Ձեր Գերապատուութեան այս աւուր թուականաւ նամակն , որով Անդրիանուպօլսոյ Գաւառական ժողովէն երեսփոխան ընտրուիլս ծանուցանելով կը հրահանելիք զիս Ձեզ յուղարկել իմ յանձնառագիրս սոյն ընտրութեան նը- կատմամբ :

Եւ որովհետեւ խնդիր եղած է թէ , դէմ :

Պատրիարքարանի թոշակաւոր պաշտօն- եայք երեսփոխանական ժողովոյ մէջ ա- թոռ կրնան ունենալ թէ ոչ , բնականա- բար աւելորդ կը լինի այժմէն յուղարկել իմ յանձնառագիրս որ նշանակութիւն չ'ունի մինչև որ ձեռնհաս մարմնոյ կող- մէ չը լուծուի վերոյիշեալ խնդիրը :

Արդ , սպասելով սոյն կէտին պարզ- ման և ինձ վերապահելով յիշեալ պաշ- տօնն ընդունելու կամ մերժելու իրա- լունքն

Մնամ ամենախոնարհ ծառայ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ 3 Յունիս 1881

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անդրիանուպօլսէն ե- կած տեղեկագիրն իմացար . ընտրութիւնն օ- րինաւոր է , բայց ընտրեալն ' Պարոնեան Յա- կոբ Էֆէնտի կ'ըսէ թէ ' Պատրիարքարանի պաշ- տօնէից երեսփոխան կարենալ լինելը խնդիր ըլլալով , ինք անօգուտ կը համարի իւր կամքն յայտնել , մինչև որ ձեռնհաս մարմնոյն կող- մանէ այս խնդիրն չը լուծուի :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այս ընտրու- թիւնը խնդիր անգամ չը կրնար ըլլալ , փասն զի գործնական կերպիւ լուծուած է : Մամուր- եան Մատթէոս Էֆէնտին ժամանակաւ զի- լանապետ էր , բայց միանգամայն երեսփո- խան , նոյնպէս Փէլլիանեան Տէր Խորէն Քա- հանոյ ' զիւանաղալիւ , միանգամայն երեսփո- խան է : Ուստի առանց վիճարանութեան պէտք է ընդունիլք Պարոնեան Էֆէնտի ընտրու- թիւնը :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուղեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թե՛ր պիտի խօսիք թէ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ոչ թեր պիտի խօսիմ ոչ դէմ. խնդիրը երկու է. նախ ընտրութեան օրինաւորութիւնը պէտք է քուէի դրնեմք, և յետոյ զբաղիմք Պարոնեան էֆէնտիի յարուցած խնդրոյն որ սկզբունքի խնդիր մ'է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս խնդիրն իւր կարեւորութիւնն ունի, հարկ է որ խօսինք: Ազգին աշխատաւորաց դէմ տիրող այս նախապաշարումը՝ թէ չեն կարող երեսփոխան լինիլ, պարզապէս նախատինք մ'է իրենց համար, և այս նախատինքը պէտք է որ գոյն առնու այս ժողովին մէջ: Միթէ Պատրիարքարանի պաշտօնեայք մարդ չեն. եթէ արժանեաց տէր անձինք չեն, ուրեմն պէտք է որ հոն ալ պաշտօն վարեն. իսկ եթէ արժանիք ունին, պէտք է որ զրկուին ընտրելութեան իրաւունքէն: Պատրիարքարանի մէջ ունեցած պաշտօնը երեսփոխանութեան հետ չը կրնար շփոթուիլ: Հոս Պատրիարքարանի պաշտօնեայն, երբ միանգամայն երեսփոխան է, կրնայ ամենայն համարձակութեամբ պաշտօնեալ իւր կարծիքներն, կրնայ մինչև իսկ Վարչութեան արարքներն քննադատել:

Ազգային պաշտօնեայք ամենէն աւելի կարող են պաշտօնաւնել Ազգին շահերը, վասն զի անմիջական կերպով զանոնք իրենց շահերն ալ կհամարուին. մարդէնք որ Ազգէն ապրող երեսփոխաններ շատնան այս ժողովոյս մէջ:

Ժամանակ մը վարժապետաց համար ալ կար այս արդելքը. ուրեմն ալ ևս ժամանակ է որ Պատրիարքարանի պաշտօնեայք ալ ազատ ըլլան հոս գարու և բազմելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրեմ, շուտ վերջացուցէք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ներկեցէք, Ատենապետ էֆէնտի, երբէք իրաւունք չունիք խօսող մ'արդիւլելու, թողէք որ շարունակեմ: Յաւալի է որ Ազգէն ապրող մարդիկ նուաաս

կը նկատուին. ծխախոյտի կրակ տուող պաշտօնեայները դեռ չեն մոռցուած. այս նուաասութեան գաղափարը պէտք է ջնջեմք: Ամենիդ ալ գիտէք որ Պարոնեան էֆէնտի տգէտ մարդ չէ. ինք մտածեր է թէ Ազգին մէջ արմատացած այս նախապաշարման դէմ մարտաւելու կարողութիւն չունենալով, ուզեր է խնդիր ընել այս բանը, և երեսփոխանութիւնն ընդունած կամ չընդունած ըլլալը յայտնելէ առաջ՝ ուզեր է ձեռնհաս մարմնոյն կողմանէ այս մասին որոշում մը արուելուն սպասել. ըսել է թէ այս մասին խօսքեր լրած է արդէն և այն խօսքերն ալ հարկաւ ոչ թէ փողոցներու մէջ, այլ պաշտօնական ակմրոց մէջ լրած է անշուշտ:

Մեր՝ իր սկզբունք խնդիր՝ պէտք է մերժեմք այս սխալ համոզումը, և ով որ ամսականաւոր պաշտօնեայ է և արժանեաց տէր պէտք է որ չարգիլուի երեսփոխան կարենալ ըլլալէ: Արժանիք ունեցող երեսփոխան մը, իր սկզբունք վրայ միշտ հաստատ կը մնայ հոս. ի հարկին կը մտքառի Վարչութեան դէմ և ի հարկին զայն կը խնկարկէ ալ: Եղեր է ժամանակ որ ևս անգամ խնկարկեր եմ զայն երբ նորա մի լաւ գործն տեսած եմ, բայց շատ անգամ ալ սաստիկ հարուածեր եմ զայն իւր վնասակոր ընթացից համար:

Մեր ընտրութեանց մէջ արժանիք միայն պէտք է փնտռեմք, երբ ընտրեալ Պարոնեան էֆէնտի արժանեաց տէր է, պէտք է մերժել զայն, բաւական է որ ընտրութիւնն օրինաւոր եղած լինի: Ով որ Ազգին հացը կուտէ, նորա թուրը կը քաշէ: Պարոնեան էֆէնտի Ազգին հացը կուտէ, միթէ կարծէք որ Վարչութեան յուր արարքներուն համար քուէ մը յաւելու իրմով. ի՞նչ վախ պիտի ունենայ Վարչութեանէն, քանի որ իր կերածը Ազգին հացն է իւր աշխատութեան փոխարէն, և ո՛չ թէ Վարչութեան: Եթէ պատահի իսկ որ նեղուի Վարչութեան կամ թէ ըսենք յանիրաւի պաշտօնանի լինի, իրաւունք տալու է իրեն որ իւր

պաշտօնանկութիւնը խնդիր ընէ և ժողովոյս ատենանը հանէ: Ուրեմն ևս կառավարիւմ խնդիրը այս տեսութեամբ քուէի դնել:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Ես յարգելով ընտրելոյն արժանիքը, լռել ուզած էի, բայց քանի որ Փափաղեան էֆէնտի սկզբունքի խնդիր մը յարոյց, ևս ալ կատարուիմ խօսիլ: Մեր Ազգային Սահմանադրութիւնն թէև այս մասին լռութիւն կը սրահէ, բայց համազգային օրէնք մը կայ՝ զոր պէտք է յարգեմք: Երեսփոխանք պէտք է ազատ մարդիկ լինին. երբ երեսփոխան մը ամսականաւոր պաշտօնեայ է միանգամայն, չը կրնար իւր երեսփոխանական պաշտօնը՝ առանց նկատուիլ խղճի մտօք կատարել: Օսմանեան Երեսփոխանական ժողովոյն մէջ ալ այս օրէնքն ընդունուեցաւ: Երբ ընտրեալ մ'ամսականաւոր պաշտօնեայ էր, կամ իւր պաշտօնէն պէտք էր դադարիլ՝ կամ երեսփոխանութենէ: Ուստի, կը կրկնեմ, յարգելով ընտրելոյն՝ Պարոնեան էֆէնտիի արժանիքը, և կառավարիւմ որ ամսականաւոր պաշտօնեայք երեսփոխան չընդունուին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Սխալ է. Տէրութեան օրէնքը մերինին հետ չը կրնար բաղդատուիլ: Արդարեւ, ո՞վ կանուանէ Տէրութեան պաշտօնեայները. — Սուլթանը: Ո՞վ պաշտօնանի կընէ զանոնք. — դարձեալ Սուլթանը: Բայց մերն այնպէս չէ. երբ պաշտօնեայ մը յանիրաւի պաշտօնանի ըլլայ, կրնայ ժողովոյս ղիմել, հատուցում և իրաւունք պահանջել: Իմ խօսքերս չեն հասկցուած: Ես կըսեմ թէ՛ երբ պաշտօնեայ մը արժանեաց տէր է, պէտք է արգիլուի երեսփոխան լինելէ: Ազգէն ամսական ունեցող երեսփոխան մը Վարչութեան կամ հակառակ պիտի լինի կամ կողմնակից: Երբ Վարչութեան արարքը բննադատէ, պիտի ըսեմ ևս. ահա մարդ մ'որ ամսականաւոր պաշտօնեայ լինելով հանդերձ, իր երեսփոխանական պարտաւորութիւնքը խղճի մտօք կը կա

տարէ. ահա արժանեաց տէր մարդ: Բայց երբ զՎարչութիւնը խնկարկէ, յայնժամ կը հարուածեմ ևս զայն՝ ըսելով, դու արդէն վարձեալ ևս Վարչութեանէն: Երբ նա ազատ խօսի, Վարչութիւնը չը պիտի կրնայ դադրեցնել զայն իւր պաշտօնէն, զի նա տարիներով ծառայեր է Ազգին և արդիւնք ցուցուցեր. եթէ անարժան էր, սկիզբէն պէտք է չէր պաշտօն յանձնել նմա:

Մեր Ազգին վիճակը տէրութեան հետ բաղդատել չէ կարելի. Սրբազան Պատրիարքը չը կրնար այսօր պաշտօնեայ մը ճամբել, եթէ նա ծուլութեան, անհաւատարմութեան կամ նմանօրինակ յանցանք մը գործած չէ. բայց Սուլթանը վեհապետ է և ամեն ուղտօժը կըրնայ ընել:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս իմացար, ընտրեալը՝ երեսփոխանական պաշտօնն ընդունած կամ չընդունած լինելը յայտնելու համար, պայման մը կը դնէ, այսինքն կուզէ գիտնալ թէ՛ ամսականաւոր պաշտօնեայք երեսփոխան պիտի կրնա՞ն ընդունուիլ թէ ո՛չ: Ուստի նախ այս խնդիրը քուէի պիտի դնեմ:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Նախ ընտրութեան օրինաւորութիւնը պէտք է քուէի դնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ վերջը, նախ պաշտօնէից երեսփոխան ընդունուիլը կամ չընդունուիլը քուէի պիտի դնեմ:

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Այդ սկզբունքը արդէն լուծուած է. այդ մասին բուհարիւթեան ալ հարկ չկայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէտք է օրէնք լինի: Ուրեմն ո՞վ որ կընդունի թէ ամսականաւոր

պաշտօնեայ մը Եթէ արժանեաց տէր է կըրնայ միանգամայն երեսփոխան լինիլ, իւր ձեռքը վեր վերցնելու շնորհ ընէ :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Քանի որ արժանեաց տէր լինելը պայման կը դնէք, ես ալ բուէի կը մասնակցիմ :

Հետեւաբար բուէի գրուելով՝ միաձայն հաւանութեամբ ժողովը կ'ընդունի թէ՛ ամասականաւոր պաշտօնեայ մը կրնայ նաև երեսփոխան լինիլ, եթէ արժանեաց տէր է :

Ապա Ատենապետ Էֆէնտին կը յայտնէ թէ՛ Անդրիանուպօլսոյ ընտրութեան տեղեկագիրը բուէի պիտի դնէ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ի՞նչպէս բուէի պիտի դնէք, քանի որ չեմք գիտեր թէ Պարոնեան Էֆէնտի երեսփոխանութեան պաշտօնը կընդունի թէ ո՛չ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր կը բուարկեմք, ընտրեալը եթէ կուզէ՛ կրնայ հրաժարիլ :

Հետեւաբար, Անդրիանուպօլսոյ ընտրութեան տեղեկագիրն ալ բուէի գրուելով, ժողովը միաձայնութեամբ կ'ընդունի զայն, և Ատենապետ Էֆէնտի երեսփոխան կ'ընտրուի Յակոբ Էֆէնտի Պարոնեան :

Տեղեկագիրք. Բարակեօմրիկի

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր, Նախագահ Ազգային Վարչութեան Պատկ. Խորհրդոյն .

Ձեր Ամեն, Սրբազնութեան 203 թը-

ւահամար և ապրիլ 17 ամսաթիւ հրատարակուող համեմատ, Քարակէօմրիկ — Սպլմաթօմրուք թաղիս հրաժարեալ և դադարեալ երկուց երեսփոխանաց տեղ շնորհ ընտրութեանն համար, երեսփոխանական Ընտրող. ժողով կազմելով, ընտրական նախապատրաստութիւններէ յետոյ, 10 Մայիս կիրակի օրն քուէարկութիւն և քուէհամարի գործողութիւնը կատարեցինք թաղ. Խորհրդարանին մէջ ի ներկայութեան ժողովրդեան :

Քուէարկութեան մասնակցեցան 31 ընտրողք՝ անձամբք, և 40 նամակօք, ընդամենը միայն 91 թաղեցի ընտրողք, և բացարձակ առաւելութեամբ Ազգ. Երեսփոխան ընտրեցան, Մեծ. Տեարք՝

Կարապետ Յ. Փանոսեան (Խմբագիր) 87 Յովհաննէս Թորոսեան (Ի Պէպէք) 83

Ամեն. Հայր Սրբազան, նորընտիր երկուց երեսփոխանացս յանձնառութեան գրերն, ընդ տեղեկագրոյս, Ձերումզ Սրբազնութեան մատուցանել փութալով, կը մնամք

Ամենախորին յարգանքս
Ի դիմաց Երեսփ. Ընտրող. ժողովոյս
Նախագահ

Կարապետ եպիս. Սերովբեան

Ատենադպիր Ատենապետ

Մէլքոն Հ. Տեօփակեան Յակոբ Սարգիսեան

14 Մայիս 1881 Գարակէօմրիկ

Յանձնառագիրք ընտրելոց

Սրբազան Հայր .

Այսօր Մեծ. Պատրոս Էֆէնտի Ձը-

պուքճեան և Յովհաննէս Էֆէնտի Գալֆաեանի պատգամաւորութեամբ խրկելու շնորհք ըրած սիրոյ և շնորհաւորութեան նամակնիւ առի :

Սրբազան Հայր, մեծապէս շնորհակալ եմ որ Ձեր Գամբակէօմրիկի և Սպլմաթօմրուքի մեծապատիւ ժողովուրդը, իմ անարժանութիւնս, Ազգային Երեսփոխանութեան վսեմ պաշտօնին արժանի դատեր, Ձեր Սրբազնութիւնն ալ այն մասին խնդութիւն և լիուրի վստահութիւն և համակրանք յայտնեք, և յիշեալ մեծապատիւ Էֆէնտիներն ալ, նոյն պատիւն ու շնորհաւորութիւնն ինձ հաղորդելու համար, մինչև տպարան դալու բարեհաճեք են :

Սրբազան Հայր, որչափ որ բաւական տարիներէ ի վեր, Երեսփոխանական ծանր և փափուկ պաշտօնը խղճի մտօք կատարելով սիրելի ազգերնուս ծառայելու անկարելիութիւնը տեսած, հրաժարած, և մի միայն հեռուէն ցաւեր և դիտողութիւններ յայտնելով բաւականացած եմ, բայց որովհետև շատ մը բարեկամներս, Ազգային ժողովին մէջ մտնելով ծառայելու աշխատիլս խրատած և խնդրած են, և որովհետև դուք ալ նոյնը պահանջած էք, միանգամ ևս նոր ծառայութեան փորձ մը փորձելու նպատակաւ կընդունիմ խոնարհաբար զայն պատիւն որով շնորհք ըրեր էք զիս պատուելու :

Ձերումզ սրբազնութեան օրհնութիւնը ցանկացող

Խ. Ծ.

Կարապետ Յ. Փանոսեան

1881 Մայիս 11 Գալաթա

Գերապատիւ Սրբազան Հայր
Նախագահ Ընտրող. ժողովոյ

Պատիւ ունեցայ ընդունիլ Ձեր Սրբազնութեան 10 մայիս թուագրեալ պատուական նամակը, որով Պատ. Թաղեցոյդ կողմանէ երեսփոխան ընտրուիլս ինձ ծանուցանել կը բարեհաճի :

Խորին շնորհակալութիւնս մատուցանելով այն վստահութեան և համակրանաց ցոյցին, զոր Պատ. Թաղեցիք ինձ յայտնել բարեհաճած են, կը փութամ ներկայիւս իմացնել և իմ յանձնառութիւնս ի պարտուպատշաճ տնօրէնութիւն :

Հաճեցէք Հայր Սրբազան ընդունիլ յարգանացս և մեծարանացս հաւատին

Ձերումզ Սրբազնութեան
Խ. Ծ. և Ազգիս անձնուէր
Յովհաննէս Թորոսեան

Կ. Պօլիս 13 Մայիս 1881

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կառավարիւմ որ միայն Փանոսեան Էֆէնտիին յանձնառագիրը կարդացուի :

ՁԱՅՆԵՐ. — Ոչ, ո՛չ, հարկ չկայ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Քիչ մ'առաջ որոշեցինք որ յանձնառագիրք՝ առանց ընթերցման՝ ատենադրութեան մէջ անցնին. Փանոսեան Էֆէնտիին յանձնառագիրը բացառութիւն չէ կարող լինել. եթէ կարգաւ հարկ է, պէտք է միւսներուն ալ կարգաւ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Բացառութիւն ըլլա-

լով, Փանոսեան էֆէնտի յանձնառագիրը կարգացուելու է. որովհետև նա ժողովոյս զէմ խել յը հրատարակութիւններ ունի հրապարակին վրայ. սէտք է տեսնենք թէ ի՞նչ դաւանութեամբ կընդունի այժմ երեսփոխանութիւնը և թէ արդեօր իւր գրածներն յետս կը գոչէ՞ :

ՁԱՅՆԵՐ.— Լաւ, լաւ, կարգացուի

Հետևարար Ատենադպիր էֆէնտին կընթեռնու Փանոսեան էֆէնտի յանձնառագիրը :

ՁԱՅՆԵՐ.— Լաւ է, լաւ է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ.— Բանի որ պատիւ կը համարի ինք երեսփոխան լինելը, մեք ալ կը վաւերեմք զինքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ.— Յայտնի կերևի թէ Փանոսեան էֆէնտի ժողովոյս նկատմամբ իւր ունեցած կարծիքներն փոխած է. ուստի կընդունիմք զայն իբր երեսփոխան :

Ատենապետ էֆէնտին քուէի դնելով միաձայնութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ Գարակէօմբուկի ընտրութեան անդեկագիրը :

Հետևարար Ատենապետ էֆէնտի երեսփոխան ԿԸ ՀՈՉԱԿԷ :

Կարապետ էֆէնտի Փանոսեան Յովհաննէս « Թորոսեան

Տեղեկագիր Խասգիւղի

Ամեն Սրբազան Պատրիարք Հայր.

Խասգիւղի վեց երեսփոխաններէն մահուամբ և հրաժարմամբ երեք պակա.

սելոց տեղ ուրիշ նոր 3 երեսփոխանաց ընտրութեան համար Չերդ Բարձր Սրբազնութեան կողմանէ 203 համարաւ և 47 ապրիլ 1881 թուականաւ զրկուած հրամանագրին և ընտրական հրահանգացը համեմատ, Ընտրող ժողով կազմուելով հարկ եղած ընտրողաց և եռապատիկ թուով ընտրելեաց ցանկերն պատրաստելէն, ի տես հասարակութեան դրուելէն և լրագրաց մէջ ծանուցմամբ հրատարակուելէն վերջը, թէպէտև քըւէարկութիւնը կատարեց յ3 Մայիսի, Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան յատուկ քննչաց և ժողովըրդեան : Սոյն քուէարկութեան ընդ ամենը 46 քուէարկու ընտրող մասնակցեցան, 41 ը անձամբ և 5 ը նամակաւ, սակայն բացարձակ առաւելութեամբ ոչ ոք ընտրուելով, ըստ օրինի առաւելագոյն քըւէ ստացողներէն կրկնապատիկ թուով նոր ընտրելեաց ցանկն պատրաստուելէն վերջը համեմատական քուէարկութիւն կատարուեցաւ հետեւեալ կիւրակէ օրը ի 10 Մայիսի :

Այս անգամ սոյն երկրորդ քուէարկութեան մասնակից դանուեցան 63 քըւէարկուք 44 ը անձամբ և 21 ը նամակաւ : Քուէհամարը կատարուելով ի ներկայութեան Ընտրողական ժողովոյ և ժողովրդոց, բացարձակ առաւելութիւն ստացան՝

- Մեծ Ռուբէն էֆէնտի Պուլկուրեան 35
- » Սերովբէ » Ազնաւուր 45
- » Ռէթէոս » Թադէոսեան 41

Հետևարար վերոյիշեալ երեք անձինքն՝ ըստ օրինի և ըստ տրամադրութեան ընտրական հրահանգի՝ Ազգ. Երեսփոխան ընտրուեցան :

Ընտրողական ժողովս, սոյն ընտրութենէ յետոյ նորոգ ընտրելոց դիմելով արդէն նոցա հաւանութիւնը ստացած է, որոնք յանձն կառնեն ստանձնել սոյն պաշտօն՝ ըստ դրաւոր յայտարարութեանց՝ որք աստ ներփակեալ են նաևս պարտ կը համարիմք մեզ յայտնել աստանօր, թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ քուէարկութեան միջոցին և թէ՛ վերջը որ և իցէ դիտողութիւն և գանգատ տեղի ունեցած չէ, ոչ ընտրողաց և ոչ թաղեցւոց կողմանէ :

Ուստի պատիւ ունիմք ներկայ տեղեկագիր ընդ որ և նշանակեալ գրեանք Չերդ Բարձր Սրբազնութեան զրկել առ ի լրումն պաշտօնի Ընտրող ժողովոյս :

Մնամ Չերդ Բարձր Սրբազնութեան
Ամենախոնարհ ծառայք
Նախագահ Ընտրող ժողովոյ
Գրքգոր Եպիս. Տ. Պօղոսեան
Վ. Ատենադպրի Ատենապետ
Համբարձում Սուճուեան Եղիա Շանպագեան
18 Մայիս 1881 Խասգիւղ

Յանձնառագիրը ընտրելոց.
Գերապատիւ Հայր

Պատիւ ունեցայ ընդունիլ օրհնագիծ նամակ Գերապատուութեան Չերոյ որ ի 10 ներկայ ամսոյ, որով Ընտրողական ժողովոյ կողմանէ պաշտօնապէս կը ծանուցանէք որ Խասգիւղի վեց երեսփոխանաց մին վախճանմամբ և երկուքը հրաժարմամբ պակասած լինելով, կիւրա.

կէ օր տեղի ունեցած քուէարկութեամբ Խասգիւղի Պատուարժան թաղեցիք զիս Ազգային երեսփոխան ընտրած են :

Չեր Գերապատուութեան այս յայտարարութիւնը պարտաւորէ զիս խորին շնորհակալութիւնս յայտնել Խասգիւղի Պատուարժան թաղեցւոց, որք արժան համարեցին նուաստս պատուել ներկայ ընտրութեամբ :

Թէպէտև անբաւական կը տեսնեմ անձս այս դժուար և փափուկ պաշտօնին, բայց Խասգիւղի Պատուարժան թաղեցւոց համակրական ցոյցը ինձ քաջալեր ունենալով, պատիւ կը համարիմ ինձ սոյն ընտրութիւնն և ծառայել ազգին ըստ իմ կարողութեան :

Կաղաչեմ, Գերապատիւ Հայր, ընդունիլ հաճեցէք խորին յարգանացս և յաւետ մեծարանացս հաւատարմին :
Խոնարհ ծառայ
Ռուբէն Պուլկուրեան

Խասգիւղ 12 Մայիսի 1881

Սրբազան Հայր

Ի պատասխանի Չերդ Սրբազնութեան շնորհալից գրութեան, զոր՝ ամսոյս 10 ին թուականաւ՝ շնորհ ըրեր, և ի դիմաց Պատուարժան Ընտրողական ժողովոյդ պատգամաւոր կանգնալ Մեծապատիւ Շահպագեան էֆէնտի ձեռօք՝ նուաստիս ուղղեր էիք, յանձնարարելով որ ընդունիմ ազգասէր թաղեցիներուդ երեսփոխանութեան բարձր պաշտօնը տանիլ յառաջի Պատկառելի Ազգային ժողովոյ պատիւ ունիմ հաղորդել, ներ.

կայիւս թէ՛ ինչպէս որ արդէն ծանուցի մեր Ազնիւ Պատգամաւոր էֆէնտիին՝ անձնական ակարութեանս՝ փաստաբանական գործերս՝ Դատական Տեսչութեան բաղմամբիւ զբաղմունքն, և օրինական հաւաքածոյի մը խմբագրութիւնը՝ չափազանց աշխատութեանց տեղի տալով, այդ աղգային բարձր պաշտօնը ևս միատեղ և արժանաւորութեամբ տանելու անկարող լինակի մը մէջ եմ:

Սակայն Սրբազանիդ ջերմագին յանձնագիրն, և Մեծապատիւ Շահպաղեան էֆէնտիին բարեսիրտ թախանձանաց խոնարհելով՝ որոշեցի առժամեայ պայմանաւ ստանձնել սոյն պաշտօնը:

Ուստի խնդրեմ Սրբազան Տէր, որ բարեհաճիք շնորհակալեացս թարգմանն լինիլ առաջի Մեծապատիւ ընտրողացս, նաև թաղիդ Յարգի Ժողովրդեան, որոնց, և Սրբազանիդ պատուիրանաց սպասելով, մնամ ակնածանօք և համբուրիւ Սուրբ աշոյղ

Խ. Ծ.
Ս. Ազնաւոր

Բերայ 12/24 Մայիսի 1881

Գերապատիւ Սրբազան Հայր նախագահ Ընտր. Ժողովոյ

Ի պաշտօնէ ինձ կը ծանուցանէք թէ Խասգիւղի Մեծ. ընտրողք քուէից բացարձակ առաւելութեամբ զիս երեսփոխան ընտրելով պատուեր են, և ընդ նմին կը յարէք թէ զայդ պաշտօն ըստանձնելոյ մասին հաւանութիւնս՝ ըստ օրինի գրաւոր պարտիմ մատուցանել Ձեր Սրբազնութեան:

Սրբազան Հայր, կը բաղձայի որ այդ փափուկ ու բարձր պաշտօնին՝ քան զիս արժանաւոր ոք կոչուէր, որ աղգին առաւել օգտակար լինէր: Եւ սակայն քանի որ Մեծ. Ընտրողք զայդ պաշտօնն ինձ հաւատալ կամեցեր են, ինձ ուրիշ բան չմնար ընել, եթէ ոչ իրենց առ իս ցոյց տուած համակրանաց համար՝ զիմ շնորհակալիքներ արտայայտելով՝ ըստ իմ կարի աղգին օգտին ծառայելու աշխատիլ:

Որով մնամ Ձերդ Սրբազնութեան Սրբոյ աջոյն համբուրիւ

Ռեքեոս Թաղեանեան

1881 մայիս 15 Խասգիւղ,

ՁԱՅՆԵՐ — Սխալ է. Ազնաւորեան էֆէնտի կարինէն ալ ընտրուեր է և այս վերջին ընտրութիւնն ընդուներ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սխալ չէ, մենք այս ընտրութիւնը նախ կը վաւերացնեմք, երբ կարնոյ տեղեկագիրը կարգացուի և ժողովն նոյն ընտրութեան տեղեկագիրն ևս օրինաւոր դատելէ ետքը զոյն ալ վաւերացնէ, վերջը կը հարցունեմք Ազնաւորեան էֆէնտիին թէ ո՞ր ընտրութիւնը կը ընդունի, գուցէ ժողովը կարնոյ ընտրութիւնը օրինաց համաձայն չգտնելով բեկանէ: Ես ալ երկու տեղէ ընտրուած էի, բայց վաւերանալէս վերջը մէկէն հրաժարեցայ. այս է օրէնքը:

Ուրիշ գիտողութիւն չլինելով՝ Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Խասգիւղի տեղեկագիրն որ միաձայնութեամբ կը ընդունի ժողովն:

Հետևարար Ատենապետ էֆէնտի Երեսփոխան ՀՌՁԱԿԵՑ

Սերովրէ էֆէնտի Ազնաւորեան
Ռուբէն " Պուլիուրեան
Ռէթէոս " Թաղեանեան

Տեղեկագիր էյուպի

Ամենապատիւ Տ. Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք Հայր,

Ըստ հրամանի Ձերդ բարձր Սրբազնութեան էյուպի Ս. Եղիա և Ս. Աստուածածին միացեալ թաղիս երեսփոխանական քուէհամարն կատարուելով 62 քուէէն 23 քուէ եկաւ, որմէ 16 քուէ բացարձակ առաւելութեամբ աղիւսագործ Եղիա էֆ. Շահպաղեան ընտրուած ըլլալն Ձերդ Սրբազնութեան կը յայտնեմ:

Մնամ Ձերդ Սրբազնութեան

Աղօթարար

Նախագահ Ընտ. Ժողովոյ

Յարութիւն Եպիս. Յովնանեանեան

19 Մայիս 1881 էյուպ Ս. Եղիա

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք Վարչութեան ծանօթագրէն, ընտրեալը՝ Եղիա էֆէնտի Շահպաղ, օտար տէրութեան հարստակ է եղեր, ուստի կարծեմ քուէի դնելու հարկ չկայ, վասն զի օրինաց դէմ է:

Հետևարար ժողովը կը Մեծի էյուպի ընտրութիւնը, և նոր ընտրութեան ձեռնարկելու համար Դիւանին կը յանձնարարէ որ ծանուցանէ Վարչութեան:

Տեղեկագիր Գուգիւննոս և Իճատիէ միացեալ թաղերու

Վեհաշնորհ Սրբազան Հայր

Ձեր Բարձր Սրբազնութեան ապրիլ 17, ամսաթուով հրամանագրին համաձայն միացեալ թաղիցս երկու երեսփոխանի նորոգ ընտրութիւնը օրինաւորապէս հետեւեալ կերպիւ կատարուեցաւ՝ որոյ արդիւնքը կը փութամք այսու տեղեկագրով ներկայել Ձերդ Սրբազնութեան:

Նախ և առաջ թաղ. Խորհրդոյ ինը անդամոց հետ եօթը պատուարժան թաղեցիք ի ժողով հրաւիրելով՝ Ընտրողական Ժողովն կազմուեցաւ, և Ապրիլ 26 կիրակի օրն Ընտրողական Ժողովն առաջին նիստն ընելով իւր դիւանը կազմէն վերջը միացեալ թաղիցս երեսփոխանական ընտրողաց ցանկը պատրաստեց մասնաւոր խնամօք, և ընտրելի երկու երեսփոխանի համար գաղտնի քուէարկութեամբ եռապատիկ ցուցակն ալ պատրաստելով երկուքը մէկէն հանդերձ կարևոր ծանօթութեամբք ի տես ժողովրդեան կախել տուաւ մէկ օրինակ Գուգիւննոսեկ եկեղեցւոյ բակը՝ և մէկ օրինակ Իճատիէի դպրոցի դուռը, և մասնաւոր նամակներով ընտրողք համօրէն քուէարկութեան հրաւիրեց Մայիս 10, կիրակի օրը ժամը 2էն մինչև 4. նոյն օրն Ընտրողական Ժողովն երկրորդ նիստն ընելով եկած քուէներն ընդունեց կնքուած քուէտուփի մէջ, և պայմանեալ ժամուն քուէհամարի ձեռնարկեց. անձամբ քուէ բերողները քուէնին քուէտուփը ձգեցին և քուէար-

կուաց ցանկին մէջ իրենց խնուան առջին ստորագրեցին՝ նամակաւ քուէ զրկողներն ատենագրի ձեռօք նշանակուեցան ցանկին մէջ՝ վերջը քուէտուփը բացուելով ինկած քուէներն ցանկին հետ բաղդատելով ճիշտ գտաւ՝ և միացեալ թաղիցս 400 ընտրողներէն միայն 198 քուէ եկած ձգուած էր քուէտուփը, և քուէհամարը կատարուելով մինակ բացարձակ առաւելութեամբ ընտրեալ երեսփոխան գրտնուեցան Գրիգոր Էֆէնտի ներսէսեան քուէ 146, և համեմատական քուէ ստացողներէն միայն առաւելագոյն քուէ ստացող էին Յարութիւն Էֆէնտի Սահակեան քուէ 91, և Մկրտիչ Էֆէնտի Մէզպուրեան քուէ 67, այս արդիւնքը ևս ընտրողաց դարձեալ մասնաւոր նամակներով Մայիս 17, կիրակի օրուան համար կրկին քուէարկութեան հրաւեր կարգացուեցաւ յիշեալ երկու առաւելագոյն քուէ ստացողներէն մէկը միայն ընտրելու պայմանաւ, և յիշեալ օրն ընտրողական ժողովը երրորդ նիստ ընելով ընդունեց վերոյ յիշեալ կանոնով նամակաւ և անձամբ եկած քուէներն որոց թիւն էր 254, որոշեալ ժամուն քուէհամարն կատարուեցաւ և արդիւնքն Մկրտիչ Էֆէնտի Մէզպուրեան քուէ 199, Յարութիւն Էֆէնտի Սահակեան քուէ 55, սոյն բաժնուած քուէներէն յայտնուեցաւ որ Մկրտիչ Էֆէնտի Մէզպուրեան երեսփոխան ընտրուած էր:

Այսպէս միացեալ թաղիցս ընտրութիւնը օրինաւորապէս կատարուելով կը փութամբ յայտնել Չեր Բարձր Սրբաղանութեան որ Գուղկունձուք և Իճատիէ միացեալ թաղիցս օրինաւոր նորոգ ընտրեալ Ազգային երկու երեսփոխաններն

են՝ Մեծապատիւ Գրիգոր Էֆէնտի ներսէսեան և Մեծապատիւ Մկրտիչ Էֆէնտի Մէզպուրեան՝ որ իրենց հաճութիւններն ևս ստանալով յանձնառագրերն ներկայեալ կուղարկեմք՝ և սոքա երկուքն ալ յայտնի է որ Ազգասէր և Ազգային գործոց հմուտ անձինք ըլլալով՝ կմնայ Չեր Բարձր Սրբաղանութեան ներկայել Ազգային ժողովոյ այս ընտրութեան տեղեկագիրը

Որով մնամք
 Չեր Բարձր Սրբաղանութեան
 Ն. ծառայք
 Ի դիմաց ընտրողական ժողովոյ
 Նախագահ
 Գրիգոր քճնյ. Սեբեան
 Ատենագրար Ատենագրար
 Յակոբ Չարագլեան Յով. Ազնաւորեան
 22 Մայիս 1881

Յ սննանագիրքը ընտրելոց
 Արժանապատիւ Հայր Նախագահ
 ընտր. ժողովոյ Գուղկունձուք և Իճատիէ
 միացեալ թաղից .

Միացեալ թաղիցս կողմէն Ազգային երեսփոխան ընտրուելու ծանուցանող Չեր Արժանապատուութեան Մայիս 17 ամսաթուով նամակն ստացայ .
 Պատուարժան թաղեցւոց քուէարկութեան արդիւնքը նկատելով իբրև հաւատարմ իրենց առիտ ունեցած վստահութեան, կը փութամ ներկայիւս յայտնել սոյն Ազգային պաշտօնն ընդունած

ըլլայս, աղաչելով միանգամայն որ բարեհաճիք տեղեկագրել առ որ անկ է:

Մնամ
 Արժանապատուութեան Չերուժ
 Խ. Ծ.
 Ն. Գրիգոր Ներսէսեան
 20 մայիս 1881
 Իճատիէ

Աւագապատիւ Տ. Հայր,
 Չեր Ս. Հայրութեան կողմէն երէկուան հրատարակու չընդունուելով հարկ եղաւ ինձ խոնարհիլ պատուարժան թաղեցւոց կամքին առջև, Ազգ. երեսփոխանական պաշտօնին լուծն ընդունելով:
 Համբուրիւ աջողդ եմ
 Մնալով ի համբոյր
 Աջողդ օձելոյ
 Խ. Ծ.
 Մկրտիչ Ս. Մեզպուրեան
 19 Մայիս 1881
 Իճատիէ

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Գուղկունձուք և Իճատիէ միացեալ թաղերը 400 ընտրող ունեցեր են. բանի՞ տուն կայ այդ թաղերուն մէջ որ այչափ ընտրող ունեցեր է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շուրջ 500 տուն կայ բայց անպաշտօն կերպով կըսեմ զայս:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Անցեալ նստին 75 զուրուշի խնդիրն ծագեցաւ, և ու

րոշ վճիռ մը չկրցաւ առնուլ. եթէ 75 զուրուշ տուրքը հիմ բռնենք, արդեօք սխտի կըրնա՞նք 400 ընտրող գտնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցած նստին որոշուեցաւ որ վարչութիւնն իւր զիտցած և սկըսած կերպով աւարտել տայ ընտրութիւնները. ուստի այս մասին այսօր զխտողութիւն ընելու իրաւունք չունիմք:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Անցած նստին ըսուեցաւ թէ՛ այն անձը որ արժանիք ունի, բայց 75 զուրուշի տուրքը չէ կարող վճարել, պէտք է տայ իւր քուէն: Արդ ես չեմ հարցներ թէ 500 տան մէջ 400 հոգի 75 զուրուշ վճարելու կարողութիւն ունեցող կա՞յ թէ ո՛չ, այլ կը հարցնեմ թէ ի՞նչ հիման վրայ որ ուրիշ թաղերու մէջ կատարեցան ընտրութիւնք, մի և նոյն կերպով կատարուելու էր նաև այս միացեալ թաղերուն մէջ: Վարչութիւնը չէր կարող, կարծեմ, իւրաքանչիւր թաղի տարբեր տարբեր հրահանգներ տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ նստին այս մասին երկայն վիճարանութիւն մը լինելէ յետոյ, մեծամասնութեամբ հետեւեալը որոշուեցաւ. « ժողովը վարչութեան իմաստութեանը կը թողու ընտրութեանց գործը, որ ինչ կերպով որ սկսած է այնպէս աւարտէ » . Այլ ևս աւելորդ է այս մասին զխտողութիւն ընել:

ԶԱՏՆԵՐ. — Խնդիր չկայ, աւելորդ է վիճարանութիւնը:

Ատենագրար Էֆէնտին քուէի գնելով Գուղկունձուք և Իճատիէ միացեալ թաղերու ընտրութեան տեղեկագիրը մեծամասնութեամբ կը ՆԳՈՒՆՈՒԻ Ժողովէն:

Հետեւաբար Ատենագրար Էֆէնտի երեսփոխան կը ՀՈՉԱԿԷ

Մկրտիչ Էֆէնտի Մէզպուրեան
Գրիգոր » Ներսէսեան

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Նշանակե-
ցէք զիս յանուանէ, ես հակառակ եմ այս ու-
րոշման :

Տեղեկագիր Պէշիկբաշի .

Ամենապատիւ Սրբազան Տէր

Նախագահ Ազգային Վարչութեան

Ըստ հրահանգի Բ. Սրբազնութեանդ որ ի 27 Ապրիլ, նոյն ամսոյ 26 ին Ընտ-
րողական Ժողով կազմուելով, Սահմա-
նադրութեան 65, 66, 67 և 68 ըդ յօդ-
ուածոց տրամադրութեան համաձայն
ընտրութեան ձեռնարկուեցաւ : Քուէ-
արկութիւնը կատարուեցաւ, Մայիսի
10 ըդ կիւրակէ օրն . 74 ընտրողներէն
միայն 31 հոգի մասնակցեցան քուէար-
կութեան, յորոց 23 անձամբ և 8 նա-
մակաւ բացարձակ առաւելութիւնն էր
16 զոր ոչ ոք չընտրելեաց ստացած լի-
նելով, հարկ եղաւ երկրորդ քուէար-
կութիւն կատարել առաւելագոյն քուէ
ստացող հետեւեալ երկու էֆէնտիներուն
վրայ :

Յովհաննէս էֆ. Պ. Քէրէստէճեան 13
Վարդան » Պապիկեան 6

Ամսոյս 17 ըդ կիւրակէ օրն երկրորդ
քուէարկութիւնն կատարուեցաւ, այս
անգամ 35 հոգի մասնակցեցան քուէ-
արկութեան յորոց 28 անձամբ և 7
զրիվ, ասոնցմէ զեղչուեցան ըստ օրինի
երկու քուէ որք պարապ էին և մէկ

քուէ որ ստորագրութիւն կը կրէր . ուն-
տի քուէից թիւն իջաւ 32 ի, և արդիւն-
քըն եղաւ հետեւեալն

Յովհաննէս էֆ. Պ. Քէրէստէճեան 22
Վարդան » Պապիկեան 10

որով թաղիս բնակիչներէն Մեծ. Յով-
հաննէս էֆէնտի Պ. Քէրէստէճեան ընտ-
րուեցաւ օրինաւորապէս երեսնութեան
թաղիս մերոյ, որն որ բարեհաճեցաւ
ազգասիրաբար ընդունիլ սոյն պաշտօն :
Ընտրող. Ժողովս կը փութայ յաւելուել
թէ՛ երկու անգամ կատարուած քուէ-
արկութեանց ժամանակ թէ՛ ընտրելեաց
և թէ՛ ընտրողաց ցանկերուն վրայ և ոչ
մէկ դիտողութիւն կամ բողոք տեղի
ունեցաւ թաղեցւոց կողմանէ :

Չսոյն տեղեկագրելով Ամենապա-
տիւ Տէրութեանդ ի վաւերացում,

Մնամք ամենախորին յարգանօք
ի դիմաց Ընտր. Ժողովոյ

Նախագահ
Խորեհ Արքեպիսկոպոս
Ատենադպիր Ատենապետ

Մ. Հիւտավերուեան Գեորգ Ալալըմճը օղլու

Յանձնառագիր ընտրելոյն .

Գերապատիւ Սրբազան Հայր ,

Բարձր Սրբազնութեանդ 17 Մայիս
թուականաւ գրութիւնն ընդունելու պա-
տիւն ունեցայ, որով թաղիս երեսնութեան
ընտրուած լինելս յայտնելով հաւանու-
թիւնս կը պահանջէք :

Շնորհակալութիւնս յայտնելով ա-

մեն անոնց որք իրենց քուէովս պատուած
ես զին, ներկայիւս կը փութամ յայտ
առնել Գեր. Տէրութեանդ որ թէպէտ և
անբաւական սոյն ամենափափուկ պաշ-
տօնին, սակայն յօգուտ Ազգիս իմովսա-
նըն աշխատակից գտնուելու յուսով :

Մնամ Գերապատիւ Տէրութեանդ
Ամենախոնարհ ծառայ

Յ. Պ. Քերեստէճեան

1881 Մայիս 23 Պէշիկթաշի ,

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Է. ԷՖ. — կուզեմ հասկը-
նալ թէ ի՞նչ իրաւամբ քուէին մէկը մերժերեն
ստորագրութիւն զրեւոն համար : Մորդ ա-
զատ է իր քուէն սրահելու կամ յայտնելու : Ո՞վ
կհարգելու զին, երբ քուէն ուրիշին ցուցնեմ
կրամ որի քուէ տուած ըլլալս իմ ստորագրու-
թեամբս յայտնեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրէնքը կը արու-
մադրէ որ քուէարկութիւնը գաղտնի լինի :

ԷՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ յայտնելիքս գոր-
մանք մ'է միայն : Պէշիկթաշի պէս թաղ մ'որ
Հայոց զգայուն մասին մէկ թաղն է և ուր եր-
կու երեք հարիւր տուն Հայ կայ, ինչպէս կը
լինի որ այսչափ թիչ ընտրող ունենայ : Շիտակն
ըսելով, անշուշտ բան մը պիտի ըլլայ հոս և
այս պատիւ չբերէր ընտրելոյն . չգիտեմ թէ
ինչպէս հաճեր է ընդունիլ, ես ըլլայի ինկոյն
պիտի հրամարէի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ փոքրերուն
բնաւ տեղի չկայ : Ընտրութեան նկատմամբ
թաղին մէջ զխտողութիւն ընտղ չէ եղեր . 74
անձի քուէնամակ խորհուած է, ահա այս է զի-
տողութեան արժանի կէտը, զի կը ցուցնէ թէ
թէ այդ թաղին մէջ անզգայբ աւելի շատ են

եղեր . այս մասին պէտք չէ խնդիր յու-
ղել : Միայն թէ բան մը կայ այն ի նկատ առ-
նելու է . երբ թաղի մը մէջ հակառակութիւն
ըլլայ ընտրելեաց դէմ, այն տունն քուէները կը
բաղմանան : Կերեւի թէ Պէշիկթաշի մէջ այս
տեսակ բաներ չկան եղեր, և ով որ կանչուեր
է այն քուէ տուեր է : Ընտրեալը, Քէրէս-
տէճեան էֆէնտի ազնիւ անձ մ'է . ուստի
մեք կը վաւերացնեմք զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Պէ-
շիկթաշի ընտրութիւնը խիստ սահմանափակ
կատարել տուաւ Ընտր. Ժողովը . դժգոհ այդ
պարագայէն, շատեր՝ չուղեցին քուէարկու-
թեան մասնակցիլ և շատեր ալ՝ մինչև իսկ չը
զիջան բողոք բառնալու : Արդ քանի որ անց-
եալ նստին Վարչութեան իմաստութեան թող-
ուեցաւ ինչ կերպով որ ուզէ և սկսած է, այն
կերպով կատարել սոյն ընտրութիւններն, ու-
րեմն հարկ չեմ համարիր այս մասին աւելի խօ-
սիլ և կառաջարկեմ որ քուէի դրուի տեղեկա-
գիրը :

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Խօսք կու-
ղեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ կը ներէ Մատ-
թէոս Սրբազան, քուէի պիտի դնեմ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Վիճարա-
նութիւնը գոցելու մի աշխատիր, ասի Ազգ-
Երեսնութեան Ժողովոյն վերահաղմութեան
խնդիրն է և կարի կարեւոր . պէտք է լուռ ու-
շաղրութիւն ընեմք. թաղի մը մէջ թույլտուու-
թիւն կը լինի և մինչև 400 ընտրող կելլէ . ու-
րիշ թաղի մը մէջ, որ բաղդատմամբ այն թա-
ղին կրնար անկէ աւելի ընտրող ունենալ հա-

կառակը կը ստատահի : Աը տեսնեմ որ ամեն թաղի համար միօրինակ հրահանգ չէ զրկած Վարչութիւնը : Մեզ եկած հրահանգը կըսէր թէ ըստ Սահմանադրութեան կատարեցէք բըւէարկութիւնը . մեր թաղն որ սովորաբար 300 ընտրող կունենար , 70 ի իջաւ այդ թիւը : Նոյնպէս Պէշիկթաշի մէջ . բայց Գուղիունճուբ և Իճատիէ այս հրահանգին հարկաւ ուշ չդնելով , 400 ի բարձրացեր է ընտրողաց թիւը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը ցաւիմ որ անցեալ նստին մէջ յուզուած խնդիր մը վերստին կը յուզէք :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Է. ԷՖ. — Ես ալ խօսք կուզեմ , առաջարկութիւն մ'ունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք չեմ կրնար տալ . կրնար ձեր առաջարկութիւնն յատկապէս զըրով բերել :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Է. ԷՖ. — Մատթէոս Աբրբաղան ինձմէ ետքը խօսք ուզեց , անոր խօսք տուիր ինձ ինչո՞ւ չէք տար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գուք ետքը խօսք ուզեցիր :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Այսօրուան համար ընտրութեան արգելք չեմ ուզեր ըլլալ . բայց կառաջարկեմ որ այսուհետև այսպիսի անտեղութիւնք չը լինին :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Է. ԷՖ. — Մատթէոս եւսիսկոպոս նոր օրէնք չ'առաջարկեր , այլ տիրող օրինաց հաւատարիմ մնալ կառաջարկէ :

Արիւ զիտողութիւն չը լինելով , Ատենա-

պետ էֆէնտին բուէի կը դնէ Պէշիկթաշի ընտրութեանց տեղեկագիրը , որ' եղած դիտողութեամբ հանդերձ' մեծամասնութեամբ կըՆ. ԴՈՒՆՈՒԻ Ժողովէն :

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի Երեսփոխան կը ՀՈՉԱԿէ :

Յովհաննէս էֆէնտի ֆէրէստէճեան :

Տեղեկագիր Բերայի

Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայր

Նախագահ Ազգ. Վարչ. Խորհրդոյ ,

Ձեր Բ. Սրբազնութեան Ապրիլ 17 թուական թիւ 203 հրամանագրին համեմատ՝ թաղիս հրաժարեալ վեց երեսփոխանաց տեղ նորեր ընտրելու համար , թաղ. Խորհրդոյ անդամոց հետ վեց թաղեցիներէ կազմեալ Ընտրողական Ժողովըս մայիս 1 ին իւր առաջին նիստն ընելով՝ ի թաղական Խորհրդարանն Բերայի , ընտրողաց ցանկը պատրաստեց քննութեամբ , և քուէարկութեան օր որոշելով մայիս 10 կիւրակէն , ընտրողաց ցանկն եռապատիկ ընտրելեաց ցուցակաւ մը հանդերձ՝ մայիս 3 կիւրակէ առաւօտէն սկսեալ ի տես ժողովրդեան և դիտողութիւն ընտրողաց կախել տուաւ Եկեղեցւոյ բակին մէջ ութօրեայ պայմանաժամաւ :

Եւ որպէս զի ընտրողք չթուլանան իրենց Սահմանադրական իրաւունքն ի կիր առնուլ և բազմութեամբ մասնակցին քուէարկութեան , յորդորական մի-

ջոցներ ձեռք առաւ , և յատենի Եկեղեցւոյ ծանուցանելէ և լրագրաց միջոցաւ յայտարարելէ զատ , յատուկ հրաւիրագիր ուղղեց իւրաքանչիւր ընտրողի :

Հետևաբար մայիս 10 կիւրակէ օրն՝ նախորոշ յայտարարութեան քուէարկութիւն և քուէհամար կատարուելով 380 ընտրողներէն՝ 84 ին անձամբ և 84 ին նամակաւ , ընդ ամենը 168 ընտրողաց մասնակցութեամբ հետևեալ չորս անձինք քուէից բացարձակ առաւելութիւն ստանալով , Ազգային Երեսփոխան ընտրուեցան , որք են՝

Տօքթէօր Վիշէն էֆ.	Օրմանեան	123
Ղազար	» Հովուեան	101
Տէլէմաք	» Էքսէրճեան	95
Յարութիւն	» Պէկեան	93

Ուստի Ընտր. Ժողովս մնացեալ երկու երեսփոխանաց համար մայիս 17 կիւրակէ օր համեմատական քուէարկութիւն կատարելու հրաւիրեց զընտրողս այն չորս անձանց վրայ , որք վերոյիշեալ ընտրելիներէն յետոյ առաւելագոյն քուէ առած էին՝ առաջին քուէարկութեան մէջ , և որք էին՝

Նշան	էֆէնտի Պոյաճեան
Յարութիւն	» Նորատունկեան
Մինաս	» Չերազ
Գէորգ	» Արսլանեան

Սոյն համեմատական ընտրութեան մէջ 72 անձամբ և 102 նամակաւ ընդ ամենը 174 ընտրողաց մասնակցութեամբ առաւելագոյն քուէ ստանալով Ազգ. Երեսփոխան ընտրուեցան

Նշան	էֆէնտի Պոյաճեան	126
Յարութիւն	» Նորատունկեան	99

Որով Բերայէն պակասեալ վեց ե-

րեսփոխանաց ընտրութիւնն ամբողջացաւ : Ընտրողական Ժողովս վերոյիշեալ վեց ընտրելոց յանձնառարները խնդրած և ստացած լինելով , կը փութայ՝ ներկայ տեղեկագրիս հետ մատուցանել զանձք Ձեր Բ. Սրբազնութեան առ ի պատշաճ տնօրինութիւն վաւերացմանն :

Մնամք խորին յարգանօք
Նախագահ Ընտր. Ժողովոյ
Ներսէս Վարդ. Ասլանեան
Բ. Բերայ

Պ. Պապօեան
Տ. Մ. Էքսէրճեան
Յ. Ղազար Ս. Հովուեան
Յովհաննէս Եղիազարեան
Յակոբ Նշանեան

Բերա 24 Մայիս 1881

Յանձնառագիրք Ընտրելոց

Արժ. Ներսէս Վ. Ասլանեան
Քարողիչ Բերայ , Նախ. Ընտ. Ժողովոյ ,

Ընդունեցայ Ձեր երեկուան թուականաւ առ իս ուղղած պաշտօնական գիրը , որով կը ծանուցանէք Բերայի թաղին կողմանէ քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային Երեսփոխանութեան ընտրուիլս :

Մեծապէս շնորհակալ եմ պատուարժան թաղեցւոյն առ իս ցուցուցած վրստահութեան և համակրութեան որով զիս սոյն բարձր պաշտօնին կկոչէ : Թէպէտ և անձնական տկարութիւնըս և զբազմունքս ինձ չի ներեն սոյն պաշտօնով զբազիլ ինչպէս որ կը փափա-

քէի : բայց քաջ ճանաչելով այն պարտա-
կանութիւնը որ ամեն անհատ ունի առ
Ազգն , ամեն ջանք ի գործ պիտի դնեմ
որպէս զի պատուարժան թաղեցոյն առ-
խ ունեցած վտահուութիւնը ի գերեւ
չի հանեմ :

Կրկին կինդրեմ որ ընդունիք իմ
խորին շնորհակալիքս և միանգամայն
Մեծ . ընտրողաց առջև սոյն զգացմանցս
թարգմանն ըլլալու բարեհաճիք :

Մնամ յարգանք
Վ. Օրմանեան

Բէրայ 11 մայիս 1884

Գերապատիւ Հայր :

Պատիւ ունեցայ ընդունիլ Ձեր պատ-
ուական նամակը , որով կը ծանուցանէք
նուաստիս իմ ընտրութիւնս իրրև երես-
փոխան Բերայի կողմէն :

Պատուարժան թաղեցւոցս քուէին
առջև խանարհելէն ուրիշ բան կարող
չեմ ընել , այլ միայն կը փութամ պա-
տասխանել թէ խորին շնորհակալու-
թեամբ կընդունիմ և կաղաչեմ նաև որ
Ձեր Գերապատուութիւնն ալ հաճի ըն-
դունիլ անկեղծ յարգանացս հաւատարմ-
որով մնամ Գերապատութեանդ
անձնուէր :

Յ. Ղազար Ս. Հովուեան

1884 Մայիս 11/23

Գերապատիւ Հայր ,

Ընդունեցայ Ձեր Սրբութեան 10
Մայիս թուականաւ գրութիւնը , ո-
րով իմ նուաստութեան Բերայի թաղեց-

ւոց կողմանէ երեսփոխան ընտրուած ըլ-
լալս ինձ կը յայտնէ :

Պատիւ ունենալով յայտնել իմ ան-
կեղծ շնորհակալութիւններս Բերայի թա-
ղեցւոց առ իս ցուցած համակրութեան
համար կը յօժարիմ Ձեր Գերապատուու-
թեան առ նոյն ըբած հրաւերին համա-
պատասխանել ոչ թէ յայտմ մասին իմ
ունեցած հանգամանացս յենլով այլ մի
միայն ապաստանելով Ձեր ազօթիցը առ-
խ կարենալ պաշտպանել Բերայի թա-
ղեցւոյն իրաւունքներն ի պատկառելի ժո-
ղովն երեսփոխանութեան առ որ վերջս-
տին կոչէ զիս :

Ձեր օրհնութեան ակնկալու
Տ. Մ. Էքսերճեան

11 Մայիս 1884 Բէրա

Գերապատիւ Հայր ,

Նախագահ Ընտրողական Ժողովոյ :

Ոչ վասն անձին արժանեաց , զոր
չունիմ , այլ միայն պատուարժան թա-
ղեցւոց համակրութիւն և վստահութիւնը
յարգելու համար որոշած եմ ընդունիլ
այն ընտրութիւնը որ կը կոչէ զիս յազ-
գային Երեսփոխանութեան :

Հաւատալով թէ Ձեր Ս. Հայրու-
թեան Աստուածահաճոյ մաղթանքն ու
սիրելի Ազգայնոց սէրն զօրավիզն պիտի
լինին ինձ ակարիս ծառայելու իմնական
մեր բաղմակարօտ Ազգին :

Ընդունիլ կաղաչեմ այս առթիւ իմ
յարգանացս հաւատարմն :

Մնամ համբուրիւ օձեալ աջոյդ
Յարութիւն Պեկեան

14 Մայիս 1884 Բէրա ,

Արժանապատիւ Նախագահ Հայր .
Ընտրողական Ժողովոյ .

Ամսոյս 17 թուագրեալ Ձերդ Ար-
ժանապատուութեան ծանուցագիրը ըս-
տանալու պատիւն ունեցայ որով Բերայի
կողմանէ Ազգ. Երեսփոխան ընտրուած
ըլլալս կիմացնէիք :

Բերայի թաղը ինձ այնպիսի փափուկ
և ծանր պաշտօն մը յանձնելով պատուել
ուզած է որուն իմ արժանիքս չհամա-
պատասխանելը կը խոստովանիմ , ասով
հանդերձ պարտ ճանաչելով ինձ Ամենա-
սիրելի Ազգիս ծառայել կը համակերպիմ
շնորհակալութեամբ , և կը խոստանամ
ըստ կարելոյն աշխատիլ որ սիրելի թաղս
ինձ ցուցուցած վստահութեան մէջ խաբ-
ուած չըլլայ :

Մնամ խորին յարգանք
Նշան Պ. Պոյաճեան

23 Մայիս 1884 Բէրայ

Բարեշնորհ Հայր Սուրբ .

Ձեր Սրբութեան ամսոյս 17 թուով
գրութիւնը կը ծանուցանէ Բերայի Ազ-
գայնոց կողմանէ երեսփոխան ընտրուած
լինելս :

Իմ մասիս ցոյց տրուած այն վրս-
տահութեան ու համակրութեանը համար
շնորհակալ ըլլալով , կը փութամ յայտ-
նել որ թէպէտ այս միջոցիս անձնական
զբաղմունքս խիստ ծանր և երեսփոխա-
նութեան պաշտօնը ինձ համար դժուա-
րին , այսու ամենայնիւ կընդունիմ զայն
և պիտի ջանամ կարողութեանս չափովը

իրբ հայ կատարել իմ պարտաւորու-
թիւնը :

Մնամ յարգանք
Յ. Նորատունկեան

19 Մայիս 1884 Ղալաթիա

Բերայի տեղեկագրոյն վրայ դիտողութիւն
չըլինելով , քուէի կը դրուի և միաձայնու-
թեամբ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ Ժողովէն :

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտի Երես-
փոխան ԿԸ ՀՈՉԱԿԷ

- Տօրթէօր Վիչէն Էֆէնտի Օրմանեան
- Ղազար Էֆէնտի Հովուեան
- Տէլէմար Էֆէնտի Էքսերճեան
- Յարութիւն Էֆէնտի Պեկեան
- Նշան Էֆէնտի Պոյաճեան
- Յորութիւն Էֆէնտի Նորատունկեան

Տեղեմագիր Կարնոյ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր մեր .

Պատիւ ունեցանք կարգալ Ձեր բար-
ձր Սրբաղնութեան 137 թիւ և Ապրիլ
23 թուական նամակն , որով ծանուցա-
նելով թէ Կ. Պօլսոյ թաղերէն և գաւառ-
ներէն պակասած երեսփոխանաց թիւը
լրացնելու համար Ազգ. Ժողովոյ նոր
տարեշրջանի բացման առթիւ նորոգ
ընտրութիւն պիտի կատարուի և թէ գա-
ւառիս երեսփոխան վսեմ. Սիմօն պէյ
Մագսուտեան հրաժարած է , կը հրաւի-
րէիք զմեզ անմիջապէս նորա տեղ ուրիշ
մը ընտրել ըստ օրինական պայմանաց և

արդիւնքը հաղորդել ի Պատրիարքարանը :

Ըստ այսմ նախորդ կիւրակէ ի 10 Մայիսի գումարեալ գաւառական ընդ-ժողովոյ մէջ առաջարկուելով սոյն խընդիրը, անմիջապէս ընտրութեան ձեռնարկուեցաւ և ընտրելեաց եռապիկ ցանկը պատրաստուելով որք էին՝

- Սերովբէ էֆ. Ազնաւոր
- Խաչատուր » Տ. Ներսիսեան կարնեցի
- Մինաս » Չերաղ

գաղտնի քուէարկութիւն կատարուեցաւ ի ներկայութեան 27 երեսփոխան անդամաց և քուէից բացարձակ առաւելութեամբ կարնոյ գաւառիս Երեսփոխան ընտրուեցաւ :

Սերովբէ էֆէնտի Ազնաւոր 17 քուէիւ

Ծանուցանելով Չեր Բարձր Սրբազնութեան ժողովոյս քուէարկութեան սոյն արդիւնքը, կը խնդրեմք հաստատել զընտրեալն յերեսփոխանութեան կարնոյ գաւառիս :

Մնամք յարգանք

Ի զխնայ Գաւառ. Ընդհ. Ժողովոյն կարնոյ
Նախագահ
Մաղաքիա Վ. Օրմանեան

Բ. Ատենաղայիր Ատենապետ
Գ. Մըսրեան Հ. Պալարեան

15 Մայիս 1881 կարին ,

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Գաւառական ժողովոյ անդամոց 27 ին ներկայութեամբը ընտրութիւնը կատարուեր է . ամբողջ թիւը քանի՞ է այդ ժողովոյ անդամոց, ասի պէտք էր նշանակուած ըլլար այս տեղեկագրոյն մէջ,

զուցէ 73 անդամ ունենան , յայնժամ 27 անգամը մեծամասնութիւն չեն կազմեր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը յիշեմ թէ կարնոյ Գաւառական ժողովը 40-45 հոգիէ կը բաղկանայ , հետեւորար 27 թիւը միշտ մեծամասնութիւն է : Այդ ժողովոյ անդամք աւելի բազմութիւ լինելու չեն , միայն թէ Պատրիարքարանի զիւանատունը նշանակելու էր զայս :

ՉԱՅՆԵՐ. — Գուէ՛ , բուէ՛ :

Ատենապետ էֆէնտի Մատթէոս Արքազանին բրած զխտորութեամբ հանդերձ քուէի դրաւ կարնոյ տեղեկագիրը սե միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱՒ ԺՈՂՈՎՆԻ :

Հետեւորար Ատենապետ էֆէնտի Երեսփոխան ՀՈՉԱԿԵՑ

Սերովբէ էֆէնտի Ազնաւոր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հիմայ կը մնայ հարցընել Ազնաւոր էֆէնտիին թէ՛ կարնոյ ընտրութիւնը կընդունի թէ՛ Խաղաղիւնը :

Ազնաւոր էֆէնտի արդէն Գաւառական Խորհրդական ըլլալուն պատճառաւ ժողովոյս ներկայ գտնուելուն՝ խօսք կառնու :

ԱԶՆԱԻՈՐ Ս. ԷՖ. — Որք որ կուզէք, այն կընդունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դուք պիտի որոշէք :

ԱԶՆԱԻՈՐ. Ս. ԷՖ. — Նախ Խաղաղէն ընտրուեցայ և յայտնեցի թէ յօժար էի ընդունիլ այդ ընտրութիւնը . վերջը երբ կարնոյ տեղեկագիրը եկաւ , վարչական Խորհրդոյ մէջ սրտուեցաւ որ կարնոյ ընտրութիւնը ընդունիմ :

զի ստեղի զիւրին էր Խաղաղիւն մէջ նոր ընտրութիւն կատարել տալ քան թէ կարնոյ : Ուրեմն ես ալ կը փափայիմ կարնոյ Երեսփոխանութիւնը ընդունիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ետտ աղէկ : Ուրեմն կը յանձնարարեմք վարչութեան որ Խաղաղիւն համար նոր ընտրութեան հրահանգ տայ :

Տեղեկագիր Միջագիւղի.

Ամենապատիւ Բ. Սրբազան Հայր .

Բարձրաշնորհ Սրբազնութեանդ հըրահանգին համաձայն՝ գիւղիս հրաժարեալ երեսփոխան Գօլօթեան Աւետիս էֆէնտի տեղ ըստ օրինի նոր ընտրութեան համար ընտրող ժողովն գումարելով, քուէարկութեան ձեռնարկեցինք ամսոյս 3 կիրակի օր , գիւղիս 100 ընտրողներէն միայն 44 անձինք մասնակցեցան այս առաջին քուէարկութեան որ բացարձակ արդիւնք չը գոյանալուն յաջորդ կիրակի օր (10 Մայիս) առաւելագոյն քուէ ստացողներէն հետեւեալ երկու անձանց վրայ՝

Եսայեան Թովմաս էֆէնտի քուէ 18
Ճանըմեան Մկրտիչ » » 16

համեմատական քուէարկութիւն կատարուեցաւ և 42 քուէարկութեանց մասնակցութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային Երեսփոխան ընտրուեցաւ .

Ճանըմեան Մկրտիչ էֆէնտի քուէ 27

Ուստի , նորին Մեծապատուութեան հաւանութիւնն ապահովեալ , կը փու-

թամ տեղեկագրել առ Չերդ Բ. Սրբազնութեան ի պարտուպատշաճ տնօրէնութիւն :

Մնամք Բարձրաշնորհ Սրբազնութեանդ ամենախոնարհ ծառայ .
Նախագահ Ընտրողական ժողովոյ
Յակոբ Մ. Վ. Աշոտ Փալիագեան

Ի զխնայ Ընտրողական ժողովոյ
Ատենաղայիր Ատենապետ
Տ. Գ. Սեւեան Սահակ Ղազարոսեան

20 Մայիս 1881 Օրթագիւղ

Յանձնառագիր քննութիւն.

Գերապատիւ Տէր ,

Ստացայ ներկայիս 10 ին թուագրըբեալ Չեր Սրբութեան պատուարժան գրութիւնն , որով կը ղեկուցանէք , թէ՛ թաղեցիքս հաճեր են զիս իրենց կողմանէ երեսփոխան ընտրել Ազգային Ընդհանուր ժողովոյ :

Սոյն առ իս ցոյց տրուած վստահութեան նշանն , պատիւ անձին համարելով , փութամ ներկայիս խոստանալ որ յանձնառու եմ յիշեալ պաշտօնն անձնուիրարար յօգուտ Ազգիս և եթ կատարել :

Ընդունեցէք , Գերապատիւ Տէր ,
խորին յարգանացս հաւաստիքը :
Մ. ձանըմեան

23 Մայիսի 1881

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս մասին բողոքագիր մ'եւս կայ Սարգիս Մանուկեան ստորագ-

բութեամբ, որ չէ վաւերացած Վիւանատան կողմանէ: Այս մասին բողոքարկուն ուրիշ բողոք մ'ալ ունի Միջազիւղի Թաղ. Խորհրդոյ դէմ, որ չէ ուզած վաւերել նորա ստորագրութիւնը, ահաւասիկ սոյն երկրորդ բողոքը:

Վսեմաշուք Ատենապետ էֆ.

Ազգային Երեսփոխանական Ժողովոյ,

Ներփակեալ բողոքագրոյս ստորագրութիւնն՝ ըստ օրինի՝ Միջազիւղի Թաղ. Խորհրդոյ կողմանէ վաւերել տալ հարկ լինելով, և սակայն նոյն Խորհուրդն՝ չը գիտեմ ի՞նչ իրաւամբ՝ չը կատարած լինելով զիւր այդ պարտականութիւնն, հարկ կը համարիմ սոյն անիրաւ վարմանց դէմ ևս բողոքելով, պատկառելի Ժողովոյդ ուշադրութեան ներկայել զայս իրողութիւն:

Մնամ ամենախոնարհ յարգանքք

Ս. Մանաեան

4/16 Յունիս 1884 Օրթագիւղ

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Բողոքողը կըսէ թէ Թաղ. Խորհրդոյ ներկայեցի բողոքս, բայց չը վաւերացուց: Հարկ է հարցնել սոյն Խորհրդոյ չը վաւերացնելուն պատճառը:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Քիչ մ'առաջ բըննեցի խնդիրը: Թաղ. Խորհուրդը չէ ուզեր վաւերել բողոքողին ստորագրութիւնը, նա ալ Պատրիարքարանի զիւանին ղիտեր և հարցուցեր է թէ ի՞նչ ընելու է, Վիւանատունն ալ պատասխաններ է թէ՛ այս մասին ալ բողոք մը տալ պէտք է Ազգ. Ժողովոյ: Բողոքողն ալ այնպէս ըրեր է:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Երեսփոխանական ընտրութիւնք ինչպէս կը կատարուին լաւ գիտենք. Թաղ. Խորհրդոյ մեծամասնութեամբ և մի քանի անձանց միացմամբ Ընտրողական Ժողով կը կազմուի և ընտրութիւնք կը կատարուին: Քանի որ բողոքը Ընտր. Ժողովոյ դէմ է, բնական է թէ՛ Թաղ. Խորհուրդը չը պիտի վաւերացնէր բողոքողին ստորագրութիւնը: Ուստի եթէ Վիւանը կը ճանաչէ այդ անձը, ստորագրութիւնն վաւերացեալ կրնանք համարիլ. կամ եթէ ունկնդրաց մէջ է բողոքողը, կըրնանք իրեն հարցնել թէ ի՞րն է ստորագրութիւնը:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Բողոքին տիրոջը հետ չը կրնար խօսիլ Ժողովը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բողոքին կարգացուիլը կուզէ՞ք:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Նախ համառօտութիւնն կարգացէ՞ք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Համառօտութիւն չունի. արդէն բողոքը տամարագրեալ չէ Պատրիարքարանի Վիւանատան կողմէն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչո՞ւ համար զիւանատունը չէ տամարագրուեր, և Վիւանն ինչո՞ւ կ'ընդունի չը տամարագրուած բողոք մը:

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Բողոքին իմաստը չեմ գիտեր. բայց բողոքողը կըսէ թէ Միջազիւղի Թաղ. Խորհուրդը չը վաւերացուց ստորագրութիւնն: Ինչ որ ալ լինի բողոքին նիւթը, Թաղ. Խորհուրդը պարտաւոր էր վաւերացնել ստորագրութիւնը: Եթէ արդարև բողոքողը տարեր է բողոքը Թաղ. Խորհրդոյ և սա առանց արդարացի սրտոճառ մ'ունենալու չէ վաւերացուցած զայն, պակասութիւն մ'է ըրածը, և այն ատեն խնդրոյն դոյնը կը փոխուի:

ուի ու պէտք կըլլայ վարչութեան յղել այդ բողոքը ի քննութիւն:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Կառաջարկեմ որ բողոքը կարգացուի, որպէս զի տեսնենք թէ ի՞նչ է նիւթը: Եթէ ընտրութիւնը չը բեկանէր յղենք վարչութեան:

ՅԱԿՈՒ Վ. ԱԵՈՏ. — Եթէ կուզէք, կըրնամ լիով տեղեկութիւն տալ սոյն ընտրութեան մասին:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Հարկ չկայ:

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Հ. ԷՖ. — Եթէ Թաղական Խորհուրդը բողոքին ստորագրութիւնը չէ վաւերացուցեր, պէտք էր վարչութեան բողոքել, զի վարչութիւնն է Թաղ. Խորհրդոյ իշխանը:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Մագպուլեան էֆէնտի իրաւունք ունի, երբ վարչութեան բողոքելու էր կըսէ: Բայց միթէ չը կրնար ըլլալ որ օրէնք չ'գիտցունենք ալ գտնուին Ազգին մէջ: Մեր պէտք է սովրեցնենք օրէնքը: Ուստի պատշաճ կը դատեմ հարցնել Վիւանատան թէ ինչո՞ւ համար չէ տամարագրուած բողոքը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԶՊՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Բողոքողին ստորագրութիւնը Թաղ. Խորհրդէն վաւերացած չըլլալուն համար զիւանատունը չէր տամարագրած:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ուրիմն զրկանք եղեր է բողոքողին:

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ բողոքը նկատողութեան առնուի, հաւանական է որ Միջազիւղի ընտրութիւնը բեկանի: Մագպուլ-

եան էֆէնտի իրաւունք ունի երբ կըսէ թէ վարչութեան զիմելու էր. բայց քանի որ Թաղ. Խորհուրդը չէ վաւերացուցեր ստորագրութիւնը և քանի որ խնդիրն բողոքի մը վրայ է որ ընտրութեան կը վերաբերի և որ թերևս զայն բեկանելու զօրութիւն ալ կրնայ ունենալ: Ես կառաջարկեմ որ բողոքը կարգացուի և եթէ ծանր կէտ մը չը նշմարեմք անդ, վաւերացնեմք ընտրութիւնը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչ որ ալ ըլլաւ եղածը, մենք մեր ներքին կանոնադրին հետեւելու եմք: Վիւանը չի կրնար չտամարագրեալ աղերս կամ բողոք ընդունիլ. եթէ այս օրէնքը ջնջեմք, ամեն կողմանէ թուղթեր կը տեղան Վիւանին վրայ: Գալով այն կէտին թէ միթէ պէ՞տք է մերժուի այս բողոքագիրը, կըսեմ թէ ո՛չ, վասնզի օրէնքը կը տրամադրէ. [կը կարգայ կանոնադրին 89րդ յօդուածը]: Հետեւաբար Վիւանատունը տամարագրելու էր զայն: Իսկ ստորագրութեան չ'վաւերացման գալով, զիւանը պիտի հարցնէր թէ ինչո՞ւ չ'վաւերացուց, [կը կարգայ կանոնադրին 90րդ յօդուածը]: Հիմայ ըսել է թէ տեսակ մը զրկողութիւն եղած է բողոքողին, չեմ գիտեր թէ աղերսագրողին անգիտութեամբ թէ Պատրիարքարանի աննախատեսութեամբ: Ուստի այս խնդիրը կը մնայ յաջորդ նիստին, ուր տամարագրեալ պէտք է գայ բողոքը. որպէս զի նկատողութեան առնուի:

ՁԱՅՆԵՐ, — Ընտրութեան վաւերացումն ալ թող յաջորդ նստին մնայ:

Հետեւաբար Ատենապետ էֆէնտին Միջազիւղի ընտրութեան վաւերացման խնդիրը յաջորդ նիստին թողու համար Ժողովին քուէին զիմեց, և Ժողովն մեծամասնութեամբ Ըն. ԴՈՒՆԵՑ:

Տեղեկագիր Եկնի գաբուի.

Ամենապատիւ Արքայան Հայր .

Բարձր Արքայանութենէդ 203 թը-
ւահամար և Ապրիլ 17 թուականաւ ե-
րեսփոխանի մը ընտրութեան հրամանն
ընդունելով, ըստ օրինի Ընտրող ժողով
կազմեցինք և եռապատիկ ընտրելեաց
ցանկով մը հրաւիրեցինք զընտրողս Մա-
յիս 10 ինկատարուելիք քուէարկութեան
որոյ արդեամբ Մեծ. Յովհաննէս էֆէն-
տի թորոտեանի ընտրութիւնը ծանուցա-
նելով իրեն՝ խնդրեցինք ըստ օրինի Ազգ-
վարչութեան յղելի յանձնառագիրը, սա-
կայն նա Գարակէօմբիւկի թաղէն ևս
ընտրուած, և իր հաճութիւնը կանխաւ
նոյն թաղեցւոց տուած ըլլալը ծանոյց
տեղեկագրոյս կցեալ նամակաւը, որով
Ընտրող ժողովս պարտաւորեցաւ եռա-
պատիկ ցանկաւ մը հրաւիրել զընտրողս
Մայիս 24 ին կատարուելիք երկրորդ
քուէարկութեան:

Ըստ ծանուցման նամակաց ժամը
12 էն մինչև 2 1/2 քուէարկութիւնը կա-
տարուելով, ճիշտ ժամը 2 1/2 ին Ընտր-
ժողովոյ ներկայ 10 անդամոց միաձայն
որոշմամբ քուէարկութեան օրինաւորու-
թիւնը ստորագրուելով, ի ներկայութեան
և ի քննութիւն թաղեցւոց քուէհամարը
կատարուեցաւ, և զրկուած 155 նամակ-
ներէն 98 նամակաւ և 39 անձամբ բեր-
ուած 137 քուէից բացարձակ առաւե-
րութեամբ 91 քուէիւ երեսփոխան ընտ-
րուեցաւ Վսեմ. Լեւոն պէյ Գաբամաճ-
եան, որոյ յանձնառագիրը նոյնպէս տե-

ղեկագրոյս հետ կը ներկայեմք Ձերու՛մ
Արքայանութեան:

Նախագահ Ընտր. ժողովոյ
Գրիգոր Եպիս. Միքրանճեան
Ատենադպիր Ատենապետ
Նշան Վ. Գաբագալ Միլնա Թօգարիեան
1884 Մայիս 27 Եէնիգարու.

Յանձնառագիր ընտրելոյն

Գերապատիւ Արքայան Հայր,
Նախագահ Պատ. Ընտր. ժողովոյ,

Պատիւ ունեցայ ընդունիլ Ձերդ
Գերապատուութեան օրհնագիրն, որ
թաղիդ կողմէ Ազգային երեսփոխան
ընտրուիլս կը ծանուցանէր:

Այսպիսի բարձր և փափուկ պաշ-
տօն մը դեռ առաջին անգամ ընդունիլը
կզգամ որ խիստ ծանր է, բայց գիտեմ
նաև թէ որչափ մեծ է ամբողջ թաղի մը
կամքն, որուն առջև ուրիշ բան չը մնար
ինձ ընել, բայց եթէ ամենայն յօժարու-
թեամբ հնազանդիլ:

Ուստի առ իս այսքան ջերմ և թան-
կազին համակրտեաց համար իմ խորին
չնորհակալքս առ Պատուարժան Ընտրո-
ղական ժողովդ և ի ձեզ, Արքայան Հայր,
առ ազնիւ թաղեցիս յայանելով՝ կաղա-
չեմ որ բարեհաճիք ընդունիլ այս առթիւ

Խորին յարգանացս հաւատարմքն
Լեւոն Քալիամաճեան
Բերայ 26 Մայիս 1884

Եէնի գաբուի տեղեկագրոյն վրայ որ և է

ղիտողութիւն չը լինելով, Ատենապետ էֆէնտի
բուէի կը դնէ և ժողովը ԿԸՆԴՈՒՆԻ շայն:

Հետեւորոյ Ատենապետ էֆէնտի Երես-
փոխան ԿԸ ԼՈՒԱԿԷ

Լեւոն էֆէնտի Գորտմասճեան

Տեղեկագիր Մայր եկեղեցւոյ, Կետիկ փաշայի
և Գոսպարուի գրսի միացեալ բաղից:

Ամեն. Ս. Պատրիարք Հայր,
Նախագահ Աղգ. Կեդր. Վարչ.

Մայր եկեղեցւոյ, Կետիկ փաշայի
և Գոսպարուի գրսի միացեալ թաղից
երեսփոխաններէն պահած ութ անձանց
տեղ նորոգ ընտրութիւն կատարելու
համար ըստ հրամանի Բարձր Արքայանու-
թեանդ անմիջապէս Ընտրողական ժողով
մը կազմեցինք և թէ յատուկ նամակօք
ու թէ լրագրաց միջոցաւ ծանուցմամբ
հրաւիրեցինք ընտրողներն իրենց այս ի-
րաւունքն ի գործ դնելու:

Ամսոյս 3 ին քուէարկութիւնը կա-
տարուելով 343 ընտրողներէն միայն 169
հոգի անձամբ և նամակաւ ընտրութեան
մասնակցեցան և բացարձակ առաւելու-
թեամբ երեսփոխան ընտրուեցան հե-
տեւեալք:

Պօզոս	էֆ. Ժամակոչեան	քուէ	99
Աւետիս	» Սուրէնեան	»	94
Միհրան	» Սէթեան	»	90

Ընտր. ժողովս այս անձանց ընտրու-
թիւնը իմացնելով և միանգամայն իրենց
պաշտօնը շնորհաւորելով յանձնառա-
գրութիւննին խնդրած էր, միայն Աւե-

տիս էֆէնտի Սուրէնեան հաճեցաւ ըն-
դունիլ, իսկ Ժամակոչեան Պօզոս և
Սէթեան Միհրան էֆէնտիները գրով
հրաժարեցան: Յայնժամ Ընտր. ժողովս
ընտրելի եօթն երեսփոխանաց ընտրու-
թեան համար քուէից համեմատական
առաւելութիւն ստացող 14 անձանց
ցուցակը պատրաստելով դարձեալ լրա-
գրաց միջոցաւ և նամակօք հրաւէր կար-
գաց ընտրողաց մասնակցիլ այս երկրորդ
քուէարկութեան ևս, որ տեղի ունեցաւ
ամսոյս 10 ին կիրակի օրը, այս անգամ
ալ 152 քուէարկուք անձամբ և նամա-
կաւ մասնակցեցան և հետեւեալ եօթն
անձինք համեմատական առաւելութեամբ
երեսփոխան ընտրուեցան:

Թովմաս	էֆ. Եսայեան	քուէ	142
Սէրովբէ	» Ազնաւոր	»	129
Թորոս	» Սարաճեան	»	128
Տօք Յարութիւն	» Թիրեաքեան	»	117
Տիգրան	» Հիւնքեարպէ- յէնտեան	»	90
Յարութիւն	» Տատեան	»	81
Կարապետ	» Փանոսեան	»	70

Ընտր. ժողովս վերոյիշեալ երեսփո-
խանաց ալ նոյնպէս ծանոյց իւրեանց
ընտրութիւնը շնորհաւորութեամբ հան-
դերձ: Տօքթօր Թիրեաքեան և Հիւն-
քեարպէյէնտեան Տիգրան էֆէնտիներն
ընդունեց, իսկ Ազնաւորեան Սէրովբէ
էֆէնտին խասգիւղէն և Փանոսեան Կա-
րապետ էֆէնտին Գարակէօմբիւկէն մի-
կնոյն օրը ընտրուած ըլլալով, նոյն թա-
ղերուն զրկեցին իւրեանց յանձնառա-
գրերը, և մնացեալ երեքն, Տատեան
Յարութիւն պէյ, Եսայեան Թովմաս և
Սարաճեան Թորոս էֆէնտիներն ալ հը-
րաժարագիր ուղղեցին:

Արդ՝ վերոյիշեալ նորընտիր երեսփոխան Սուրէնեան Աւետիս, Տօբթօր Թիրեաքեան և Հիւնքեարպէյէնտեան Տիգրան էֆէնտիներուն յանձնառագրերն ընդ գրոյս Ձեր Բարբր Սրբազնութեան մատուցանելով՝

Մնամք ամենախոնարհ ծառայք

Ի դիմաց Ընտր. Ժող. միացեալ թաղից Երես.

Նախագահ

Սուրիաս Քան. Ստեփաննոսեան

Ատենադպիր

Ատենապետ

Ա. Ա. Սուրեհեան

Յ. Գ. Նարկիլիճեան

31 Մայիս 1881 Մայր եկեղեցի

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Նախագահ Ազգ. Կեդր. Վարչ.

Մայր-Եկեղեցւոյ. Կէտիկ փաշայի և Գումգաբուի դրսի միացեալ թաղից երեսփոխաններէն պակասած ութն անձանց տեղ նորոգ ընտրութիւնը կատարած և նորին տեղեկագիրը ինչպէս որ Ձեր Բարձր Սրբազնութեան մատուցած եմք, սոյն նորընտիր երեսփոխաններէն միայն երեքը ընդունած, երեքը հրաժարած և միւս երկուքը Փանոսեան Կարապետ և Աղնաւորեան Սերովբէ էֆէնտիները ուրիշ թաղերէ ալ ընտրուած և զանոնք ընդունած ըլլանուն, Ընտ. Ժողովը խորհեցաւ առ ժամանակեցնել մնացեալ երեսփոխանաց ընտրութեան դործն որոնց վաւերացման դործողութիւնը կատարուի Ազգ. Ընդհ. Ժողովոյ մէջ, որպէս զի եթէ հարկ ըլլայ հինգ երեսփոխանաց նոր ընտրու.

թիւն ընէ. այս մասին ալ Ձեր Սրբազնութեան հրամանին սպասելով,

Մնամ ամենախոնարհ ծառայ

Ի դիմաց

Ընտր. Ժող. միացեալ թաղից Երես.

Նախագահ

Սուրիաս Քան. Ստեփաննոսեան

Յանձնառագիրը Ընտրելոց.

Ամենապատիւ Սրբազան Հայր

Միացեալ թաղից Յարգոյ ընտրողք բարեհաճեր են իրենց վստահութեան քուէով կոչել զիս յանդամակցութեան Ազգ. երեսփոխանական Ժողովոյ:

Սիրով կընդունիմ այս առիտ ընծայուած պատիւն և այս առթիւ կը նորոգեմ առ Ձեր Արժանապատուութիւնն ունեցած խորին յարգանացս հաւաստիքը:

Ծառայ Ձեր

Ա. Ա. Սուրեհեան

1881 Մայիս 5

Արժանապատիւ Ս. Հայր

Մայիս 10 ի ընտրութեանց զմեզ յԱզգ. Ժողով կոչելը կը ծանուցանէք. ժամանակի և արժանաւորութեան նկատողութեամբ մարթ էր մեզ խոյս տալ այդպիսի ծանր պաշտօնէ մը, այլ զի այդպէս արժան դատած են ընտրողք լաւագոյն համարեցայ ընդունիլ և այսու յարգել հանրութեան կամքը, հանդերձ շնորհակալութեամբ վասն համակրանաց, որով պատուեր են զմեզ Մեծ. Ընտրողք Մի.

ացեալ թաղից: Իցի՛ւ թէ արդեամբ իսկ յաջողէր մեզ արժանանալ իրենց վստահութեանը:

Ընդունեցէք, Ս. Հայր, մեր շնորհակալեաց և խորին յարգանաց հաւաստիքն:

Յ. Թիրեաքեան

12 Մայիս 1881

Արժանապատիւ Տէր Հայր

Ընկալայ ձեր Մայիս 11 թուակաշնաւ նամակն. որով կը հրաւիրելիք զիս յաթոռ երեսփոխանական Ազգային ընդհանուր Ժողովոյ. զոր կը նուիրեն ինձ միացեալ թաղից ազգային ազնիւ ընտրողք:

Սիրով կընդունիմ ինձ յանձնուած փափուկ պաշտօնն և կը խոստանամ որ ազգիս ծառայելու բոլոր պենջոյս պիտի ջանամ կարի իսկ արժանանալ այդ ազնիւ ազգայնոց ակնկալութեան:

Ուստի խնդրելով, շնորհունակ Տէր որ բարեհաճիք թարգման կանգնիլ շնորհակալութեանցս առ մեծապատիւ միացեալ թաղեցիս ինձ ցոյց տուած վստահութեան և համակրութեան նկատմամբ

Մնամ

Խոնարհ Ծառայ

Տիգրան Հիւնքեարպէյէնտեան

Խառախիւղ, 20 Մայիս 1881

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Վարչութիւնն իր ծանոթագրին մէջ Գում-գաբուի միացեալ թաղերու տեղեկագրոյն նկատմամբ ղիտողութիւն մ'ըրած է, ըսելով թէ երբ ընտրեալք հրաժարեցան, Ընտր. Ժողովն հրաժարելոց տեղ

անմիջապէս նոր ընտրութիւն կատարելու էր: Բայց Վարչութեան այս ղիտողութիւնն ըստ իստիալ է. վասն զի հրաժարեալք ոչ թէ երեսփոխանութենէ կը հրաժարին, այլ ուրիշ թաղերէ ալ միանգամայն ընտրուած ըլլալով, իրենց հաճութիւնը կանխաւ անոնց տուած, իսկ Մայր Եկեղեցիէն հրաժարելու ստիպուած էին. որինակի համար Աղնաւոր էֆէնտի մի և նոյն ժամանակ Խառախիւղն և Փանոսեան էֆէնտի մի և նոյն ժամանակ Գարակէօմրիկէն ընտրուած լինելով, Ընտրող Ժողովը հարկ համարեց արդէն կատարուած ընտրութեան վաւերացմանը սպասել, և սպա հրաժարելոց տեղ նորոգ ընտրութեան ձեռնարկել, վասն զի կըրնար ըլլալ որ Աղնաւոր էֆէնտի կամ Փանոսեան էֆէնտի Խառախիւղն կամ Գարակէօմրիկէն երեսփոխան ընտրուելով, Ազգ. Ժողովը զայդ ընտրութիւն բեկանէր և իրենք երկու թաղէ երեսփոխան ընտրուելով հանդերձ բոլորովին բացը մնային, և սասնկով զրկանք ըրած պիտի ըլլայինք: Ուստի Ընտրողական Ժողովը ուղիւ բանի հակառակ չը վարուեցաւ կարծեմ նոր ընտրութեան անմիջապէս չձեռնարկելով և Ազգ. Ժողովոյ վաւերացմանն սպասելով:

Ահա այս տեսութեամբ կըսեմ թէ Վարչութեան ղիտողութիւնը ճիշդ ըլլայէ բոլորովին հետի է զժրաղքարար:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՅ. — Անձ մը կըրնոյ չորս տեղէ երեսփոխան ընտրուիլ և ընտրութիւններն իրեն ծանուցուելով մին կընդունի և միւսներէն կը հրաժարի, որով ինք բեկանած կը լինի միւս երեք ընտրութիւնները:

Ե՛հի դարուի մէջ ալ ճիշդ այնպէս եղաւ նախ թորոս էֆէնտի ընտրուեցաւ, բայց որովհետեւ նա ուրիշ տեղէ ընտրուած ըլլալով Ե՛հի դարուէն հրաժարեցաւ, և մենք անմիջապէս նոր ընտրութեան ձեռնարկեցինք: Կարծեմ թէ ուղիւ բանի վրայ հիմնուած սկզբունքն ալ այս պէտք է լինի:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Բայց ընտրեալներն իրենք հրաժարական տուած չ'էին:

ՁԱՅՆԵՐ, — Գուէ', քուէ' :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գումգարուի միացեալ թաղերու տեղեկագիրը՝ Մէլիքեան էֆէնտիի զխողութեամբ հանդերձ քուէի պիտի դնեմ:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Այդ տեղեկագրոյն հակառակ եմ երկու պատճառներով. չը թողուցիք որ աւարտէի խօսքս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձե՛մ կրնար թողուլ որ խօսիք. կը տեսնէք ամեն կողմանէ քուէի ձայներ կը շատնան. ուստի ո՛վ որ Գումգարուի միացեալ թաղերու տեղեկագրոյն օրինաւորութիւնը՝ Մէլիքեան էֆէնտիի զխողութեամբ հանդերձ կընդունի, իւր հաւանութիւնը թող բարեհաճի յայտնել:

Չոյս ըսելով, Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ տեղեկագրոյն օրինաւորութիւնը, որ մեծամասնութեամբ ԿԸՆԳՈՒՆՈՒԻ Ժողովէն:

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի Երեսփոխան ԿԸ ՀՈՉԱԿԷ

Աւետիս էֆէնտի Սուրէնեան
Յարութիւն էֆէնտի Թիրեարեան
Տիգրան էֆէնտի Հինքեարայէյեանեան

Գարագաշեան Ն. էֆէնտի սոյն քուէարկութեան շնորհակցած ըլլալը կը յայտնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յանձնարարեմք Վարչութեան որ մնացելոց տեղ նոր ընտրութեան հրահանգ տայ փութով:

Տեղեկագիր Թօրգարուի.

Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հայր, Նախագահ Աղգ. Երեսփ. Ժողովոյ

Ձեր Բարձր Սրբազնութեան թիւ (203) Ապրիլ 17 թուական նամակն ընկալաք, որով կը յանձնարարէիք Խորհրդոյս թաղիս Երեսփոխան Դ վիճակաւ դադարեալ Յովհաննէս Էֆ. Մարգարեանի տեղ մի այլ Երեսփոխան ընտրել:

Հնազանդելով Ձեր բարձր հրամանին և հետեւելով Աղգ. Սահմանադրական օրինաց, Խորհուրդս՝ նախ իւր հինգանդամոց վրայ թաղիս բնակիչներէն վեց պատուաւոր անձինք ևս աւելցնելով Ընտրողական Ժողով մի կազմեց ընդ նախագահութեամբ Թաղիս Ս. Եկեղեցւոյ քարոզիչ Գեր. Վարդան վարդապետի: Եւ ապա 24 Մայիս 1881 քուէարկութիւն կատարելով — որոյ (274) ընտրողներէ միայն (41) ընտրող մասնակցեցան — բացարձակ առաւելութեամբ թաղիս կողմանէ Աղգ. Ընդհ. Ժողովոյ Երեսփոխան ընտրուեցաւ Տօրթէօր Կոստանիկ էֆէնտի Հինքեարայէյեանեան, և ըստ խնդրանաց Ձեր Բարձր Սրբազնութեան՝ յիշեալ էֆէնտիի յանձնառութեան նամակն ըստանալով, պատիւ ունիմք ներբակեալ ուղղարկել:

Մնամք ամենախոնարհ յարգանքօք
Խոնարհ Մառայք

Ի դիմաց Առժամանակեայ Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Յ. Պապիկեան Մ. Թօրգարուեան

Եւ ես ի հաստատութիւն սոյն ընտրութեան կ'ստորագրեմ

Նախագահ

Երեսփ. Ընտր. Ժողովոյ
Վարդան Վ. Մամիկոնեան

31 Մայիս 1881

Ի Խորհրդարան Թաղ. Խորհրդոյ
Թօր-գարուի

Գերապատիւ Ս. Հայր

Ընկալայ Մայիս 24 թուականաւ Ձեր նամակն, որով թօլ-գարուի պատուարժան թաղեցւոց կողմանէ զանարժանս Երեսփոխան ընտրելու պատիւն ըրեր են. թէ և այժմէն հարկ էր ինձ խոյս տալ այսպիսի ծանր և փափուկ պաշտօնէ մը, սակայն նկատելով որ Մեծապատիւ ընտրողաց ինձ ցոյց տուած վստահութիւնը և համակրութիւնը պիտի վշտացնեմ, լաւագոյն համարեցայ ընդունիլ և հանրութեան կամքը յարգել, յուսալով իսկ արժանանալ ազնիւ ընտրողաց ակնկալութեան:

Կը խնդրեմ, Գերապատիւ Ս. Հայր, որ բարեհաճիք ընդունել և թարգման կանգնիլ շնորհակալեացս հաւաստին,

Մնամ խորին յարգանքօք

Կոստանիկ Հինքեարայէյեանեան

Գում-գարու, 27 Մայիս 1881

Թօրգարուի տեղեկագրոյն վրայ որ և է զխողութիւն չը լինելով, Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ և ժողովը ԿԸՆԳՈՒՆՈՒ Դոյն:

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի Երեսփոխան ԿԸ ՀՈՉԱԿԷ

Տօրթ. Կոստանիկ էֆ. Հինքեարայէյեանեան:

Տեղեկագիր Ս. Կարապետ քաղին Իսկիւտարու.

Ամեն. Ս. Պատրիարք Հայր.

Նախագահ Աղգ. Ժողովոյ.

Ձեր Բարձր Սրբազնութեան թիւ 203 և Ապրիլ 17 ամսաթիւ գիրն ստացանք, որ թաղիս կողմանէ ընտրեալ Երեսփոխաններէն վախճանեալ Ալաճաճեան Մեծ. Նիկողայոս էֆէնտիի տեղ նորոգ ընտրութիւնը մինչև 3 Մայիս փութացնել կը ծանուցանէր:

Ըստ հրահանգի Բարձր Սրբազնութեան Ձերոյ Ապրիլ 19 կիւրակէ օր թաղիս Թաղ. Խորհրդոյ անդամոց թուոյն վերայ թաղիս պատուարժան Աղգալիններ ևս յաւելլով Ընտրողական Ժողովը կազմուեցաւ ինոյն օր, և իւր առաջին նիստն ընելով դիւանը կազմեց, և ընտրողութեան իրաւունք ունեցող քուէարկուաց ցանկն որ 83 անձերէ կը բաղկանար. նոյնպէս և ի դիւրութիւն ընտրողաց՝ ընտրելեաց եռապատիկ թուովը ցանկ մը պատրաստեց դադտնի քուէարկութեամբ, և զանոնք դրաւ ի տես ժողովրդեան մինչ ութ օր, և ընտրութեան հրահանգը տպագիր նամակօք Ապրիլ 21 էն սկսեալ հաղորդեց քուէարկուաց և հրաւիրեց որ իւրեանց ընտրողական իրաւունքն ի դորժ դնեն Ապ-

րիլ 26 կիւրակէ օր, ծանուցանելով նա-
և ընտրելիութեան և այլ պայմանները,
զորս Ազգային Սահմանադրութիւնը գը-
ծած է:

Որոշեալ օրը քուէարկութեան գոր-
ծողութիւնը կատարուելով տեսնուեցաւ
որ 83 ընտրողներէն 40 ընտրողք միայն
մասնակցած են քուէարկութեան, և
քուէհամարը կատարուելով տեսնուեցաւ
թէ քուէից բացարձակ առաւելութիւն
ստացող չկայ, ուստի առաւելագոյն
քուէ ստացող ընտրելեաց երկպատիկ
թուով ցանկը պատրաստեց:

Ալիքսան էֆէնտի Սաքայեան քուէ 16
Կրիգոր պէյ թագւորեան » 12
և Մայիս 3 կիւրակէ օր քուէարկու-
թեան և քուէհամարի գործողութիւնը
կատարուելով Երեսփոխան ըտրուեցաւ

Ալիքսան էֆ. Սաքայեան քուէ 30

Ընտրողական ժողովս սոյն նորըն-
տիր Երեսփոխան էֆէնտիին յատուկ
նամակաւ ծանոյց ընտրութիւնը, և
խնդրեց որ իւր յանձնառութիւնը հանի
գրով հաղորդել: Մեծ. Ալիքսան էֆէն-
տի Սաքայեան ծանոյց թէ՛ գործով մը
մայրաքաղաքէս մեկնելու պատրաստուած
լինելով՝ չկրնար ընդունիլ սոյն պաշտօնը:

Սրբազան Տէր, Ընտրողական ժո-
ղովս Մեծ. Ալիքսան էֆէնտիին հրաժա-
րականն ընդունելով Մայիս 17 կիւրա-
կէ օր դարձեալ նիստ ընելով, և ըստ
օրինի քուէարկուաց և ընտրելեաց ցան-
կերը պատրաստելով՝ դրաւ ի տես ժո-
ղովրդեան, հրաւիրելով դքուէարկուս
որ իւրեանց ընտրողական իրաւունքն ի
գործ դնեն:

Որոշեալ օրը Մայիս 24 ի ներկա-
յութեան Ընտրողական ժողովոյս քուէ-

արկութեան գործողութիւնը կատար-
ուելով տեսնուեցաւ որ քուէարկուաց
թուոյն հետզհետէ յաւելմամբ որ յան-
գեցաւ մինչ 87, ընտրողներէն 43 ընտ-
րողք միայն մասնակցած են քուէարկու-
թեան 24 անձամբ և 19 նամակաւ, և
քուէհամարը կատարուելով տեսնուեցաւ
թէ՛ քուէից բացարձակ առաւելութիւն
ստացող չկայ, ուստի առաւելագոյն
քուէ ստացող ընտրելեաց երկպատիկ
հետեւեալ ցանկն տպագիր նամակօք
հաղորդեց քուէարկուաց:

Սիմօն էֆէնտի Եաղրճեան քուէ 13
Յակոբ » Հաճեան » 11

և ծանոյց որ ընտրողք այս երկրորդ-
անգամ սոյն երկու ընտրելեաց մէջէն
միայն մէկ անձ կրնան ընտրել յայտա-
բարելով միանգամայն որ Մայիս 31
կիւրակէ օր ըստ առաջնուամբ քուէար-
կութեան և քուէհամարի գործողու-
թիւնք պիտի կատարին: Որոշեալ օրն
քուէարկութիւնն ըլլալով տեսնուեցաւ
որ 87 ընտրողներէն 53 ը մասնակցած
են քուէարկութեան 29 անձամբ և 24 ը
նամակաւ, և քուէհամարը կատարուե-
լով քուէից առաւելութեամբ Երեսփո-
խան ընտրուեցաւ

Մեծ. Յակոբ էֆէնտի Հաճեան քուէ 42

Ընտրողական ժողովս սոյն նորըն-
տիր Երեսփոխան էֆէնտիին ընտրու-
թիւնը Մայիս 31 թուական յատուկ
նամակաւ ծանոյց իրեն, և խնդրեց որ
իւր յանձնառութիւնը հաճի գրով հա-
ղորդել: Մեծ. Յակոբ էֆէնտի Հաճեան
յունիս 1 թուական նամակաւ ծանոյց
թէ՛ ինքը կընդունի սոյն պաշտօնն և
պատրաստ է իւրովսանն ծառայել Ազգին:
Ընտրողական ժողովս սոյն նորըն-

տիր երեսփոխան էֆէնտիին երեսուն
տարին լրացուցած, ընտրելիութեան ի-
րաւանց աէր և օսմանեան հպատակ ե-
ղած ըլլալը յայտնելով և իւր պաշտօնն
աւարտած համարելով կը փութայ սոյն
ընտրական գործողութեանց տեղեկա-
գիրն, ընդ նմին և նորընտիր երեսփո-
խան Հաճեան Մեծ. Յակոբ էֆէնտիին
յանձնառագիրը մատուցանել Չեր Բարձր
Սրբազնութեան:

Մնամք խորին յարգանօք
Ի զիմաց Ընտր. ժողովոյ Նոր-թաղի Իւսկիւտար
Նախագահ
Մ. Եպիս. Իգմիրլեան
Վ. Ատենաղայրի Ատենապետ
Պապիկ Գ. Գալչընեան Սենեքերիմ
2 Յունիս 1881

Յանձնառագիր ընտրելոյն:

Գերապատիւ Սրբազան Հայր:

Պատիւ ունեցայ ստանալու Չեր
Սրբազնութեան երեկուան թուով նամա-
կըն, որով թաղիս երեսփոխաններէն
վախճանեալ Ալաճաճեան Մեծ. Նիկողա-
յոս էֆէնտի տեղ, իմ երեսփոխան
ընտրուած լինելս կը ծանուցանէր, պա-
տիւ մը՝ զոր պատուարժան Ընտրողական
ժողովդ, և ազնիւ թաղեցիքս անար-
ժանաբար ինձ ըրած են, որոյ վասն կը
փութամ ջերմ շնորհակալութիւններս
յայտնել:

Արդարև սիրելի Ազգիս ծառայելու
ունեցած բաղձանացս հակառակ, անձ-
նական ծանր զբաղմունքներս թէև տը-
րամագիր չէին կարող ընել զիս, առանց

զգալի զոհողութեանց սոյնպիսի փափուկ
պաշտօն մը ստանձնել, սակայն պատ-
ուարժան Ընտրողական ժողովոյդ և ազ-
նիւ թաղեցւոցս ինձ ընծայած պատիւն
չարաչար գործածած չըլլալու, և իւր-
եանց ձայնն յարգելու և կամայն առաջ
խոնարհելու համար, կընդունիմ սիրով
ինձ ընծայուած պաշտօնն, զոր խղճի
մտօք և իմնխանն կարենալ վարելու
համար:

Չերգ. Սրբազնութեան օրհնու-
թեանցը կարօտելով և փափաքելով
Մնամ ամենայն յարգանօք
Յակոբ Յ. Հաճիեան

1 Յունիս 1881
Նոր-թաղ յիւսկիւտար

Իւսկիւտարու Ս. Կորսպետ եկեղեցւոյ
տեղեկագրոյն վրայ զիտողութիւն չը լինելով,
քուէի գրուեցաւ և մեծամասնութեամբ Ըն-
ԳՈՒՆՈՒԵՑԱԻ Ժողովէն:

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի Երես-
փոխան ՀՈՉԱԿԵՑ

Յակոբ էֆէնտի Հաճեան:

Տեղեկագիր Պալատու:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր
և Նախագահ Ազգային Վարչական Կազ-
մակերպութեան:

Ըստ հրահանգի Ամենապատիւ Սրբ-
բազնութեանդ թաղիս երեսփոխանաց
ընտրութիւնը ամենայն օրինաւորութեամբ

կատարուեցաւ մինչև Մայիս 31, քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուեցան՝

- Տեար Տիգրան Բարաղամեան
- » Սահակ Ղազարոսեան
- » Մկրտիչ Կիւմիւշեան

Ընտրեալ Երեսփոխանաց կողմէն իրենց հաւանագիրերն ինձ ուշ հասնելուն առթիւ Տեղեկագիրն ևս յապաղեցաւ, այս մասին Ձեր Բարձր Սրբազնութեան ներողամտութիւնն խնդրելով՝

Մնամ ամենախորին յարգանքք նախագահ Ընտրող ժողովոյ Յովհաննէս Վարդապետ Արշարունի 1884 Յունիս 2 Պալատ

Յանձնառագիրք Ընտրելոց.

Գերապատիւ Ս. Հայր.

Պատիւ ունեցայ Ձեր Գերապատութեան հրաւիրողին ընդունելու, որով Պալատու թաղին այս անգամ երեսփոխան ընտրուիլս ծանուցանելով կը հրաւիրէք զիս իմ յանձնառութիւնս յայտնել:

Շնորհակալ եմ, Գեր. Հայր, Պալատու ազնիւ թաղեցւոց առ իս ունեցած համակիր զգացմանց համար, որով պատուած են զիս իրենց քուէովս այսպիսի փափուկ պաշտօնի մը կոչելով, զոր կը խոստանամ ջանալ և խղճի մտօք վարել:

Մնամ յարգանքք Տ. Բարաղամեան

7 Մայիս 1884 Կ. Պոլիս

Գերապատիւ Հայր.

Երէկ Ձեր Գերապատութեան 10 ամսաթիւ նամակն ստանալու պատիւն ունեցայ. կիմացընէիք պատուարժան թաղեցւոցք Ազգ. Երեսփոխանական պատկառելի ժողովոյ զիս անդամ ընտրելն, և այդ փափուկ պաշտօնն ընդունել կհրաւիրէիք: Տէ՛ր, սիրելի Ազգս և ազնիւ թաղեցիդ յանձնառութեամբ այդ բարձր համարմունքն և վստահութիւնք, պատուասիրել կուզէ զիս, իսկ նոյն արժանեաց տէրն չլինելս խոստովանելով, շնորհապարտ մնամ:

Ներկայիս զանազան զբաղմանցս պատճառներն անկարելի կընեն ստանձնել այդ ծանր պաշտօնն, այլ սակայն ազնիւ թաղեցւոցք վստահութիւնք և ըրած թախանձանքն կպարտաւորէ հնազանդիլ նուիրական ծառայութեան մի հրաւերի, զոր պիտի ջանամ կատարել որչափ ատեն որ կարողանամ:

Բարեհաճեցէք Տէր, ընդունիլ խորին յարգանացս հաւաստին:

Սահակ Ղազարոսեան

Կ. Պոլիս 13 Մայիս 1884

Գերապատիւ Ս. Հայր

Ձեր Գերապատութեան առ իս ուղղեալ նամակն ընկալայ՝ որով ինձ կը ծանուցանէ Ազգային Երեսփոխանութեան յանդամակցութիւն կոչուիլս:

Պալատու ազնիւ թաղեցւոց ինձ նկատմամբ ցոյց տուած համակրական այս ցոյցն պարտք կը դնէ իմ վերայ իմ անկեղծ շնորհակալութեամբս յայտնել և ինձ

յատկացուցած նուիրական պաշտօնն ըստ կարի կատարել:

Ընդունեցէք, Գերապատիւ Ս. Հայր, այս առթիւ իմ խոնարհ յարգանացս հաւաստին որով եմ՝

Ամենախոնարհ ծառայ Մ. Կիւմիւշեան

Ի 1 Յունիս 1884
Ի Լօնտոն Պալատու

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Այդ տեղեկագրոյն մէջ՝ ընտրական գործողութեանց մանրամասնութիւնք, օրինակի համար՝ բանի ընտրող լինելը, բանի հոգւոյ ընտրութեան մասնակցիլը, և այլն, չեն նշանակուած: Ասի օրինաց հակառակ է. ուստի պէտք է նախաբնութեան երթայ այդ տեղեկագիր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեար բարձր չեմ ընդունիր, մեր այդ տեսակ բառ չունիմք. դալով ընտրութեան տեղեկագրին, առ այժմ կը պահեմք զայն, և երբ նախաձեռնութեան զիւանը կազմուի անոր կը յղեմք:

Հեռուարար Ասենապետ Էֆէնտի բուէի զնելով զայն, ժողովը ԿՈՐՈՇԷՆ նախաձեռնութեան զիւանին յղել:

Տեղեկագիր Գատրգիւղի.

Ամենապատիւ Տ. Տ. Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոս Պատշխարք Հայոց ի Կոստանդնուպոլիս

Ամենապատիւ Հայր

Ձերդ Սրբազնութեան 203 թուահամար պատուականը կը հրամայէր ժո-

ղովոյս երկու նոր երեսփոխանաց ընտրութիւն կատարել, ծանուցանելով Շահպաղեան Մեծ. Կարապետ Էֆ. ի արդէն հրաժարած և Մուրատեան Մեծ. Մկրտիչ Էֆ. ի Գ. վիճակաւ դադարած ըլլալը. ուստի ըստ Ձերդ հրամանի ժողովս անմիջապէս ընտրութեան ձեռնարկելով՝ կազմեց նախ Ընտրողական ժողով մի, 7 անձ ևս ընդ իւր առնելով թաղեցիներէն, և հետեւեալ եռապատիկ ընտրելեաց ցանկը պատրաստեց ի դիւրութիւնս:

1. Ատովմ Տէրոյնց
2. Գառնիկ Յ. Յովակիմեան
3. Կարապետ Հաղարեան
4. Համբարձում Իփէքճեան
5. Յակոբ Սէլվաճեան
6. Տօքթ. Ստեփան Յակովբեան.

Մայիս 17ին իներկայութեան Ընտրողական ժողովոյ քննչաց և թաղեցւոց տեղի ունենալով առաջին քուէհամարը, ծանոյց թէ, 198 ընտրողներէն միայն 78 մասնակցած էին, որոց արդիւնքն է հետեւեալը.

	Գոտ
1. Ատովմ Տէրոյնց	15
2. Գառնիկ Յ. Յովակիմեան	43
3. Կարապետ Հաղարեան	37
4. Համբարձում Իփէքճեան	17
5. Յակովբ Սէլվաճեան	5
6. Տօքթ. Ստեփան Յակովբեան	37
7. Արքահամ Սյվազեան	3
8. Սարգիս Թաչճեան	1
9. Խաչիկ Սալճեան	1
10. Մելքոն Հալաճեան	1
11. Խաչիկ Կամսարական	1

յորոց ինչպէս կը տեսնուի միայն Մ. Գառնիկ Յ. Յովակիմեանը քուէից բաց-

արձակ առաւելութիւն ստացած ըլլալով երեսփոխան ընտրուեցաւ . իսկ առաւելագոյնը ստաղոզ Մեծ . Հաղարեան և Տօրթ . Յակոբեան էֆէնտիներէն միոյն ընտրութեան համար վերստին քուէարկութիւն եղաւ :

Մայիս 24ին նոյնպէս ի ներկայութեան Ընտրող Ժողովոյ քննչաց և թաղեցւոց, երկրորդ քուէհամարը կատարուելով 64 քուէարկու միայն գտաւ յորմէ 32 քուէ Հաղարեան էֆ. ին կը պատկանէր և 32 քուէ Յակոբեան էֆ. ի ուստի Ազգ. Սահմանադրութեան 79րդ յօդուածին տրամադրութեան համաձայն, երիցազունին ընտրութիւնը վաւերական ճանչնալով Ընտրող Ժողովը փութաց նորին Մեծութեան, Հաղարեան էֆ. ին գոհութեամբ յայտնել երեսփոխան ընտրուած ըլլալը . և ընդունելութեան հաճութիւնն ստանալով ընդ Յովակիմեան էֆ. ի ընդունելութեան նամակին, կը փութացնէ Չերդ Հայրապատիւ Սրբազնութեան :

Մնալով որդիական յարգանօք
Ընտր. Ժողովոյ Նախագահ
Առժամանակեայ Քարոզիչ Ս. Թ. Եկեղեցւո
Յովսէփ Վարդապետ Սարաճեան
Ի դիմաց Թագ. Խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Սիմոն Կ. Մանուէլեան Մ. Հայրաճեան
2/14 Յունիս 1881 Գատը—քէօյ

Յանձնառագիրք ընտրելոց.
Գերապատիւ Յովսէփ Վարդապետ Սարաճեան Նախագահ դիւղիս երեսփոխանաց ընտրութեան Ընտրողական Ժողովոյ .
Գերապատիւ Տէր .
Պատիւ ունեցայ ընդունելոյ Չեր

Գերապատիւ թեան մի նամակն, որով՝ երեսփոխանական Ժողովոյ անդամակցութեան իմ յանձնառման գրաւոր հաւանութիւնն կը խնդրէիք :

Թէև այդ պաշտօնն ստանձնելոյ և Հայ Ազգութեան փափաքանաց իրականացմանն ի մասին և ըստ պահանջման աշխատելոյ դիւրութիւններն չունիմ, այլ բանի որ թաղեցի ազգայինք իւրեանց վստահութեան քուէներով պատուած են զիս, պարտ կը համարիմ սըրտաքին շնորհակալութեամբ ընդունիլ զայդ պաշտօնն, և խոստանալ ըստ իմ կարեաց նուիրելոյ իմ աշխատութիւններն յօգուտ Ազգին :

Մնամ յարգանօք
Կ. Տ. Հաղարեան
1881 Մայիս 31 Գատը քէօյ

Գերապատիւ Յովսէփ Վարդապետ Սարաճեան Նախագահ Ընտրողական Ժողովոյ ի Գատը—գիւղ .

Գերապատիւ Տէր .
Չեր Սրբութեան 18 ամսաթիւ նամակաւ թաղեցիքս զիս իւրեանց Երեսփոխանն ընտրելու պատիւն ընելն կը ծանուցանէք :

Այդ պատիւն իմ արժանիքէս բարձր լինելը զգալով քանիցս վարանեցայ, բայց վերջապէս, Ազգիս շահերուն պաշտպանութեանը համար զգացած նախանձըս մէկ կողմէն և բարեկամացս թախանձանքը միւս կողմէն, զիս դրդեց թաղակցացս փափաքը յարգել, և ընդունիլ Ազգային Ժողովոյ մէջ իրենց ներկայացուցիչն լինելու բարձր պատիւն :

Մնամ ամենախորին յարգանօք
Գ. Տ. Յովակիմեան
20 Մայիս 1881 Գատը—քէօյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք Գատըգիւղի տեղեկագիրն որոյ մէջ օրինական սակասութիւն մը կայ . միայն Ընտրող Ժողովոյ նախագահը ստորագրած է զայն :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Կարծեմ վերջին ընտրութիւնն է այս զոր պիտի վաւերացնէմք : Կը տեսնէք թէ բոլոր տեղեկագիրք այլ և այլ ձեւերով եկած են և այնպէս ալ պիտի արձանագրուին ատենագրութեան մէջ : Վարչութիւնն ընտրութեանց տեղեկագրի մի օրինակ ձև մը սկստրաստելու է տպագրեալ և յղելու է զայն թաղերուն, որպէս զի կարելի լինի այսուհետև կանոնաւորապէս կարգադրել այս խնդիրները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութեան ընելիք բանն է այդ : Այս տեղեկագրոյն մէջ ձեռն սակասութիւն կայ, ուստի պէտք է ետ դարձընել զայն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ պաշտօնը Վարչութեանն էր . նա արդէն ետ դարձնելու էր :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Որպէս զի հասկցնենք Վարչութեան թէ ինք սակասաւոր է այս դորժին մէջ, պէտք է իրեն վերադարձընէմք այս տեղեկագիրը, ըսելով թէ՛ ամամբողջացնել տուր զայն և ապա հոս բեր :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Արդէն կարդացուած տեղեկագրոց մէջ ալ այդ տեսակ օրինական թերութիւն ունեցողներ կան . ուստի ես կառավարեմ որ Ժողովը Գիւանին յանձնէ այս խնդիրը, որպէս զի նա՛ Վարչութեան հետ բանակցելով թերութիւններն ամբողջացնէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ասի տգիտութենէ յառաջ եկած թերութիւն մ'է . ուստի կառա

ջարկեմ վաւերացնել այս անգամ այդ տեղեկագրերն, պայմանաւ որ այսպիսի սակասութիւնք այլ ևս տեղի չունենան :

Ատենապետ էֆէնտի զնելով, Ժողովն եղած զխոտղութեամբք հանդերձ ԿԸՆԴՈՒՆԻ Գատըգիւղի տեղեկագիրը :

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի Երեսփոխան ԿԸ ՀՈՉԱԿԷ

Կարապետ էֆէնտի Հաղարեան
Գ. էֆէնտի Յ. Յովակիմեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսօր 30 ընտրեալ երեսփոխանաց տեղեկագրեր ունեցանք, որոց մէ միայն 4 ը չկրցան վաւերանալ : Հետեւաբար այժմ կունենանք 26 նոր երեսփոխաններ որոցմէ 5 ը եկեղեցան են : Կը մաղթենք որ իրենց սարսուռութիւնքը խղճի մտօք կատարեն :

Ատենապետ էֆէնտին Գիւանին վրայ գտնուած հետեւեալ հարցմունքն ու առաջարկութիւնն Ժողովին հաղորդեց :

Հարցում առ Կրօնական Խորհրդականն ի մասին Սոսյ Կարողիկոսական խնդրոյն .

Տեղեկացանք և ստուգեցինք որ՝ Տ. Մկրտիչ Սրբազան Քրիստոսի Տեառն մերոյ Համբարձման տօնին օրը Գուրուչէյմէյի Ս. Եկեղեցւոյն մէջ Ս. պատարագ մատուցեր է, բայց հակառակ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հնաւանդականաց չէ յիշատակեր ամենայն Հայոց Հայրապետին անունը, ինչպէս նաև

կոտանդնուպօլսոյ և Երուսաղէմի պատ-
րիարքաց անուանքը :

Արդ՝ կը հարցնեմք Գեր. կրօնական
Խորհրդականին թէ՛ առ այս պարտինա-
ւորութեան ի՞նչ տնօրէնութիւն ի գործ
դրուած է, և եթէ արդարեւ տնօրէն-
ութիւն մ'եղած է հաճի բացատրել թէ՛
ինչո՞ւ անտարբեր մնացեր է ցարդ :

Ազգային Երեսփոխանք

Մատթէոս Ե. Իզմիրլեան Հ. Ս. Ալաճաճեան
Տր. Կարապետ Սեբեան Տրդատ փափագեան
Յովն. Վ. Փափագեան Յակոբ Իսթիճեան
Ալիքսան Գ. Պէշիքեան Մ. Յ. Մէլիքեան

4 Յունիս 1881 ի Ղարաթեա

[Յետ ընթերցման]

ՁԱՅՆԵՐ. — Յղումն, յղումն :

ԻԹԻԻՃԵԱՆ Յ. ԷՅ. — Յոռաջիկայ նիս-
տին պատասխանը գալու պայմանաւ :

Ատենապետ Էֆէնտին բուէի դնելով յըզ-
ման առաջարկն, ժողովը ԿԸՆԴՈՒՆԻ զայն,
յոռաջիկայ նիստին պատասխանը գալու պայ-
մանաւ :

Առաջարկութիւն Գափամաճեան ԷՖէնտիի.

Ամենայն Հայոց ընդհանրական կա-
թողիկոսութեան և Էջմիածնայ ներկայ
փիճակին և կայութեան նկատմամբ ան-
հաճոյ տեղեկութիւնք կը հասնին հետ-
զհետէ, որք հարկաւ մեր ուշադրու-
թիւնը կը գրաւեն, մանաւանդ հաշուա-
կան մասը :

Արդ, ներկայիւս կ'առաջարկեմ Ազ-
գային Վարչութեան որ բարեհաճի այս
մասին մեզի ճիշդ տեղեկութիւններ տալ
և հաղորդել թէ ինչ կ'ընեն Վերհ. Ս.
կաթողիկոսն և Էջմիածնայ Վարչութիւնն
ազգային զարգացման, բարոյական և
կրօնական կրթութեան և ազգային շա-
հուց և իրաւանց պահպանութեան մասին :

4 Յունիս 81 Արդ. Երեսփոխան
Ի Ղարաթիա Մ. Գափամաճեան

[Յետ ընթերցման]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ըստ օրինի պէտք է
սոյն հարցումը նախաքննութեան յղել. երբ
նախաքննիչ Գիւանները կազմուին, ան առեն
պիտի յղուի :

Ժողովը ԿԸՆԴՈՒՆԻ յղման ստաջարկը :

Առաջարկութիւն Պէշիքեան ԷՖէնտիի կող-
մանէ. ի մասին բացակայութեանց .

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի.

Ազգ. ժողովոյս ներքին կանոնադ-
րութեան հարիւր եօթներորդ յօդուա-
ծը ճանապարհորդութեան և հիւանդու-
թեան պատճառաւ երեսփոխանաց բա-
ցակայութիւնը օրինաւոր կը համարի ք-
նորդ գործուող անուանելով, բայց այդ
բացակայութեան սահման մը դրած չըլ-
լալուն խիստ կարեւոր կը համարիմ սոյն
յօդուածը բարեփոխել յետագայ եղա-
նակաւ, վասն զի ինչ օգուտ կրնայ քա-
ղել Ազգն ու ժողովս այն երեսփոխան-
ներէն որոնք ճանապարհորդութեան կամ

հիւանդութեան պատճառաւ ամիսներով
և մինչև իսկ տարիներով բացակայ գըտ-
նուելով չի պիտի կարենան ժողովոյս աշ-
խատութեանցը գործակցիլ ուստի կ'առա-
ջարկեմ բարեփոխել նոյն յօդուածը այս-
պէս :

Բացակայութիւն ճանապարհորդութեան
պատճառաւ .

1. Ներելի է բացակայ գտնուիլ այն
երեսփոխանաց որք Ազգային պաշտօնիւ
և առ ժամանակեայ կերպիւ կը ճանա-
պարհորդեն :

2. Ներելի է բացակայ գտնուիլ մին-
չև Բէլ - Բէ - այն երեսփոխանաց որք ժողո-
ղոյս մէջ պաշտօն ունին :

3. Ներելի է բացակայ գտնուիլ մին-
չև երեք - Բէ - այն երեսփոխանաց որք անձ-
նական գործով կը ճանապարհորդեն :

Բացակայութիւն հիւանդութեան պատճառաւ .

1. Ներելի է բացակայ գտնուիլ մին-
չև Բէլ - Բէ - այն երեսփոխանաց որք ժո-
ղովոյս մէջ պաշտօն ունին .

2. Ներելի է բացակայ գտնուիլ մին-
չև երեք - Բէ - այն երեսփոխանաց որք ժո-
ղովոյս մէջ պաշտօն չունենալով սոսկ ե-
րեսփոխան են :

3. Ճանապարհորդութեան և հիւան-
դութեան պատճառաւ բացակայ գտնու-
ող պաշտօնաւոր երեսփոխաններուն բա-
ցակայութիւնը եթէ Բէլ - Բէ - անցնի՝ պաշ-
տօնին կը դադրի եթէ երեք - Բէ - Բէ -
խանութիւնն և անոնց տեղ նորերը
կրնարուին :

Թաղին մէջ հրդեհ, եւ տան մէջ հիւանդ պա-
տանեցոյ .

1. Թաղին մէջ հրդեհ, և տանը մէջ

հիւանդ պատահած երեսփոխանաց բա-
ցակայութիւնը սովորական օրինաց տրա-
մադրութեան ներքեւ ըլլայ, այսինքն Կրդ-
բացակայութեամբ հրաժարեալ համար-
ուի :

Արդ կաղաչեմ երեսփոխան տեարց
որ լաւ իմաստասիրեն սոյն բարեփոխու-
թեան կարեւորութիւնը որ շատ անգամ
երեսփոխանաց ներքին կանոնադրու-
թեան հարիւր եօթներորդ յօդուածին
չնորհիւր վայելած այն անսահման բացա-
կայութեան պատճառաւ փնասուած է
Ազգը՝ և ժողովս, և կանոնադրութեան
այդ յօդուածին անօրոշ վիճակն ալ ճըշ-
դած պիտի ըլլամք այսու բարեփոխու-
թեամբ որ թերութեան մէջ է :

Յայտնելով այն ակնածական յար-
գանքը զորս ունիմ առ պատկառելի Ազ-
գային ժողովս :

Ազգային Երեսփոխան

Ալիքսան Գ. Պէշիքեան

1881 Մայիս 7

[Յետ ընթերցման]

Ժողովը նոյնպէս նախաքննիչ Գիւանաց
կազմութենէն ետեւ ըննութեան յղել ԿՈՐՈՇԷ :

Ատենապետ փակուեցաւ ժամ 3 1/2 ին, ութ
օրէն վերստին գումարելու պայմանաւ :

Ատենապետ Ատենապետ

Մ. ՁՊԱՆԵԱՆ Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ Վ.Ա.Ր.ԶՈՒԹԻՒՆ


Կրօնական գործոց խորհրդական Գեր. Տ. Սիմօն Եպիսկոպոս Սէֆէրեան
 Ներքին գործոց » Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան Առեւ-դէր
 Յարաբերական գործոց » Միքայէլ » Մօսճեան
 Կրթական » » Միքայէլ » Մամիկոնեան
 Դատական » » Սերոյիբէ » Աշխատորեան
 Տնտեսական » » Գարեգին » Մէլիք Առեւ-դէր

ԿՐԹՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոս Սերովբեան
 » Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան
 » Տ. Յակոբ » Փափաղեան
 » Տ. Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէյէնեան
 » Տ. Սահակ » Տէր Սարգիսեան

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Աղէքսանդր Էֆէնտի Մէրեէժ—Գուլի
 Թովմաս » Խօրասանճեան
 Կարապետ » Շահապազ
 Պապի » Պապօեան
 Սենեքէրիմ » Մանուկեան



ՉԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Ատենական թղթեր.
2. Հրամարումն Երեսօխտանոց :

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Քննութիւն և վաւերացումն Երեսօխտանական ընտրութեանց :

Հարցում առ Կրօն. Խորհրդական, ի մասին Սոց Կաթողիկոսական խնդրոյն,
Հարցում Գաղտնաճեւան Էֆէնտիի կողմանէ .

Առաջարկութիւն Պէշիբեկան Էֆէնտիի կողմանէ, ի մասին բացակայութեանց :

Գլխ 2 դրուշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՍԼՈՒՑ ԹՍՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Գիւանաստան Պատրիարքարանի և Դալարիոյ Ս. Լուսաւորիչ
Եկեղեցւոյ բանկայը և Հայ գրաւանառաց բով